№ 96 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 10

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 96 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 10

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Շաբաթ, մայիսի 12-ին

Թիֆլիսի Ժողովարանի այգում

ՅՕԳՈՒՏ

Աշխատանքի տան Հայուհեաց „Մեղու“ Ընկերութեան

ԿԸ ԿԱՅԱՆԱՅ

ՄԱՅԻՍԵԱՆ ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ԾՐԱԳԻՐ

Երկու երաժշտական խումբ (եւրօպական և ասիական)։ Մանկական երգեցիկ խումբ 10 տարեկան խմբապետի ղեկավարութեամբ

Օդապարիկ (ժամը 6-ին)։ Մանկական խաղեր (ժամը 4-ից)։ Երեխաների հանդիսաւոր ընթացք դրօշակներով։ Մի հեքեաթ 5 կենդանի պատկերներով։ Բերուսներ մրցանակներով (ժամացոյց և այլն)։ Տիկնիկ, օղակների խաղ, վիճակախաղ, կարթ, Սանխօ-Պանչօ, նոր խաղ «Տիւանիկէ» (մեծերի համար), petits chevaux, լօտօ (ցերեկվայ ժամը 12-ից), կօնֆէտի, ծաղիկներ, բուֆէտ։

Մուտքը մեծերից 25 կ., երեխաներից 15 կ.։

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

Պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի, մայիսի 13-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է երկրորդ անգամ տարեկան ընդհանուր ժողով։

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) 1906 թ. հաշւետւութիւնը։
2) 1907 թ. նախահաշիւները։
3) Վերստուգող Յանձնաժողովի զեկուցումը։
4) Ընկերութեանը կտակած հանգուցեալ Յովհ. Խուդադեանի քարվանսարայի վերաշինութեան հարցը։
5) Վարչութեան 4 անդամների, 4 փոխանդամների և վերստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը։
6) Որբանոց-դպրոցի հարցը։
7) Ընթացիկ հարցեր։

Այս ժողովը կը կայանայ քանի անդամ որ ներկայ լինի։ (ա. օ.) 1—4

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԶԲՕՍԱՆՔ-ՀԱՃՈՅՔ

Նրանք, որոնք կիսահիւանդ, յոգնավաստակ են, մանկութիւնից սակաւարիւն և սրանց հետևանք ունին թոքերի, կրծքի, մկանունքի, կոկորդի հիւանդութիւն, թուլակազմ են, նեարդները քայքայված՝ շարունակ տենդ ունեն, դիւրագրգիռ են, նիհարում են, ախորժակ ու հանգիստ քուն չունեն, ծանր հիւանդութիւնից յետոյ թոքերի մէջ մնացել է ախտ, հազում են, շնչասպառ լինում, շուտ յոգնում, մրսկոտ են, տաքանում, քրտնում են, շարունակ ունեն հարբուխ, լսողութիւնն օր-օրի վրա թուլանում է, կամ արդէն շատ ծանր են լսում, թոքերի բորբոքումից յետոյ մնացել է բրօնխիտ, պլևրիտ, վարակվել են Կօխի բացիլներով, ժառանգական թոքախտ ունեն,—հրաւիրվում են երեք ամսով մասնակցել առողջապահական զբօսանք-հաճոյքին, որ կայանալու է առաջիկայ յունիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը։

—

Հիմնովին ուսումնասիրած լինելով այն ռէժիմը, որը ապացուցանում է, թէ տուբերկլեօզն անպայման բուժելի է, (եթէ սահմանից արդէն չէ անցել) և փորձով համոզված լինելով, որ նշանաւոր և տիեզերահռչակ պրօֆեսօր-բժիշկների դեղորայքը ոչինչ են համեմատաբար այն հրաշագործ ռէժիմին, որով այժմս բժշկում են վերև թւած հիւանդութիւնները՝ ցանկալի է, որ ձեռնհասները օգտվեն մեր երկրից գնացող այս առաջին առողջապահական զբօսանքից։

—

Ճանապարհը II կլաս ճեպընթաց, փառահեղ հաճոյք և անդորրութիւն։

Վճարը երեք ամսվայ համար 1000 ր.։ Սրա մէջ են՝ ճանապարհածախս, ուտելիք, բնակարան, բժիշկ, սանատօրիա, կուրօրտ, զուարճութիւն և հաճոյք, թատրօն, երաժշտութիւն, մուզէյ, պատկերասրահ, նորութիւններ և այլն և այլն։

Աշխարհատեսութիւն՝ Գերմանիա, Բելգիա, Հօլանդիա, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Տիրօլ և Աւստրիա։ Այս բոլոր երկրների նշանաւոր քաղաքներն ու վայրերը։

50 օր սանատօրիաներում և կուրօրտներում

40 օր զբօսանք, հաճոյք և աշխարհատեսութիւն

Մասնակցել կամեցողները պէտք է մինչև այս մայիսի 20-ը պայմանաւորված լինեն, որովհետև արտօնված տոմսակների թիւը այդ օրը հաղորդվելու է Լօնդօն և սրանից յետոյ վճարը կարող է շատ մեծ տարբերութիւն անել։

Մանրամասնութիւններն ամեն օր երեկոյեան ժամը 6 և կէսից մինչև 7 և կէսը տեղեկանալ պ. Տիգրան Նազարեանից։

Тифлисъ, Контора редакціи Агбюръ-Таразъ, Мадатовская, 5.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Թերթիս աշխատակցելու են հայ գրական-գեղարուեստական աշխարհի բոլոր յայտնի ներկայացուցիչները։ Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամեն կերպ նպաստել գեղարուեստական բեմերի զարգացման։ Այս տարի տալու է 18 համար բազմաթիւ պատկերներով և 9 հատ ընտիր պիեսներ, որոնք, առանց դժուարութեան, ամեն տեղ կարելի է ներկայացնել։ Տարեկան բաժանեգինն է 5 ր., արտասահման 6 ր. կամ 3 դօլլար։ Բաժնեգինը կարելի է վճարել մաս առ մաս. սկզբից 3 ր. և ապա իւրաքանչիւր ամսի սկզբին մի րուբլի մինչև մայիս։ Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քեօսկում, 3) խմբագրատանը, Սերգիեվսկայա № 3, ուր դիմելու են օտար քաղաքցիք։

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մեհրաբեան

300,000

150,000-ՈՎ

Բացատրութիւնը մայիսի 13-ին

առ. (հ. ու. չ.) 1—3

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետևեալ բժիշկների ձեռքով.

Ա. Ր. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ։
Ա. Գ. Բարսուկօվ.—չորեքշաբթի։
Ս. Պ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։
Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստում և այլն։

(հ. շ. ե.) 35—50

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։
Պ. Ա. ԲԷՑԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրերի ընտրութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կօպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից։

առ. ե. հ. կ. 42—100

ՀԱՅՐԵՆԻՔ՝

արտասահման մեկնելու

ՊԱՏՃԱՌՈՎ

ծախում եմ շատ լաւ սկսած գալանտէրէյնի և թղթի մեծ մագազին, որը վաճառում է օրական 200 րուբլուց ոչ պակաս։ Պայմանների մասին կարելի է իմանալ «Версаль» հիւրանոցի գրասենեակում։

(6, 8, 10,12,13) 2—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամայացող երկիր. Վերջին տեղեկութիւններ. Օգնութեան գործը. Պետական Դումայի շուրջը. Պետական Խորհուրդ. Նամակ Պետերբուրգից. Մեռնող ազգութիւն. Օրվայ խնդիրներ. Հայոց միջնակարգ դպրոցները և համալսարանը. Դումայի կուլուարներում. Պետական Դումա. Հանելուկային դրութիւնը. Նամակ Գանձակից. Թատրօն և երաժշտութիւն. Գիւղական ցաւերից. Տպաւորութիւններ Զանգեզուրի գաւառից. Իմ պատասխանը Ճեմարանի ուսուցիչ պ. Լէօին. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սսէդ և հայերը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Էրնեստ Հէկկել և մօնիզմ։

ԱՄԱՅԱՑՈՂ ԵՐԿԻՐ

IX

Երկրի ամայանալը և իր ժողովրդից դատարկվելը ամենամեծ դժբաղդութիւններից մէկն է, որ կարող է գալ մի ժողովրդի գլխին։

Թիւրքահայաստանը ամայացել է իր շատ կէտերում և նրա ժողովուրդը կամ կոտորվել փչացել է, կամ թափառում է հեռաւոր տեղերում։

Թէ որքան հայ կոտորվեց Սասունի դէպքերի և հայկական սարսափների ժամանակ, ճիշտ կերպով յայտնի չէ։ Եթէ ընդունենք իսկ, որ կոտորված հայերի թիւը աւելի փոքր է, և չէր հասնում հարիւր հազարների, ինչպէս հրատարակված էր մամուլի էջերում, այնուամենայնիւ հայ ժողովրդի կորուստը պէտք է հաշւել հարիւր հազար անձերով, որովհետև այն ժողովուրդը, որը ազատ մնաց անմիջական կոտորածից, մեռաւ տառապանքներից, հիւանդութիւններից և անասելի զրկանքներից։ Ամբողջ տոհմեր և գիւղեր ոչնչացան, ժողովրդի աճումը կանգ առաւ, բարգաւաճ տնտեսութիւնը կործանվեց և ընդարձակ տարածութիւններ, որոնք ցորենի և ուրիշ հացահատիկներով էին ծածկված, ամայացան, դառնալով արօտատեղեր քիւրդական խաշինքների համար։

X

Եւրօպական մի քանի ճանապարհորդներ հաշւում են, որ Թիւրքահայաստանը կորցրել է հայկական սարսափների ժամանակ մինչև 300,000 հայ։

Դա շատ մեծ թիւ է և չափազանցութիւն է։ Այդքան մարդ չէ կոտորվել։ Բայց եթէ մի տեղ գումարենք անմիջապէս կոտորվածներին, յետոյ զանազան զրկանքներից մահացածներին, նաև հաշւի առնենք փախստականների այն ստուար բազմութիւնը, որ հեռացել է մեր երկրից և երբեք այլ ևս չէ վերադառնալու մայր երկիր, մենք կը տեսնենք, որ արդարև կորուստը շատ խոշոր է և իր վերջնական արտայայտութեամբ սարսափելի է։

Իսկ եթէ աղէտները խլած չը լինէին մեզանից այդքան մարդկանց, այն ժամանակ բնական աճմամբ աւելացած կը լինէին 10—12 տարվայ ընթացքում ժողովրդի ընդհանուր թւի վրա դարձեալ տասնեակ հազարաւոր, գուցէ և հարիւր հազար անձ։

Կորուստը սոսկալի է։

XI

Պէտք է դիւրագգաց լինել դէպի ժողովրդական այդ մեծ աղէտը և ուշի ուշով հետևել, որ երկրի ամայանալու տխուր գործողութիւնը կանգնեցնվի։

Երբ երկրում ժողովուրդ չի լինիլ, երբ կուլտուրական երկրագործ հայ ժողովուրդը փախած, հեռացած կը լինի իր քրտինքով և իր աշխատանքով ոռոգած հողերից և նրա տեղ բռնած կը լինեն թափառականների խաշինքները, այն ժամանակ այլ ևս հայ ժողովրդի հարցը կը դառնայ մի չնչին հարց իր ամայացած հայրենիքում։

Թիւրքահայաստանի ամայանալը հայերից մի չափազանց տխուր երևոյթ է թէ ընդհանուր կուլտուրայի և թէ մասնաւորապէս հայերի համար իրանց հայրենիքի վտանգման տեսակէտով։

Հայկական հարցը աւերակների համար չէ, այլ կենդանի ժողովրդի համար։

Ա. Քալանթար

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

(Պաշտօնական հաղորդագրութիւն)

Այս տարվայ փետրվար ամսին, Պետերբուրգի հասարակական ապահովութիւնը և կարգ ու կանոնը պաշտպանող բաժանմունքը տեղեկութիւններ ստացաւ, որ մայրաքաղաքում կազմվել է մի յանցաւոր համախմբակցութիւն, որն իր գործունէութեան մօտաւոր նպատակն է դրել՝ մի շարք տէրօրիստական ակտեր կատարել։ Ստացած տեղեկութիւնները ստուգելու նպատակով սահմանած երկար և մեծ աշխատանքներով կարգի դրած հսկողութիւնը երևան հանեց մի խումբ անձանց, որոնցից մի քանիսը անդամներ են յիշեալ համախմբակցութեան, իսկ մնացածները նրա անդամների հետ անմիջական յարաբերութիւններ են պահպանում։ Այդ յարաբերութիւնները, ինչպէս պարզվեց, տեղի էին ունենում համախմբակցութեան անդամներից մի քանիսի միջև գաղտնի բնակարաններում, որոնք շարունակ փոփոխվում էին խիստ գաղտնապահութեամբ, և միևնոյն ժամանակ գրաւոր էին։

Մարտի 31 ին ձեռնարկվեց ձերբակալելու յանցաւոր համախմբման պատկանող անձանց, որոնց թիւը հասնում էր 28-ի և որոնց վրա հսկողութիւն էր նշանակված։ Դրանից յետոյ, հասարակական կարգ ու կանոնը պաշտպանող բաժանմունքը ապրիլի 4-ին յայտնեց յիշեալ 28 անձանց ձերբակալելու հիմք ծառայած փաստաթղթերի մասին Պետերբուրգի դատաստանական պալատի դատախազին։ Իր կողմից պալատի դատախազը, այդ փաստաթղթերից հաւաստիանալով որ յիրաւի կազմվել է յանցաւոր խմբակցութիւն, որ նպատակ ունի բռնութեամբ փոփոխել Ռուսաստանի կառավարութեան ձևը, (քրէական պատժագրքի 102-րդ յօդ.) նոյն ապրիլի 4-ին առաջարկեց Պետերբուրգի նահանգական դատարանի կարեւոր գործեր վարող դատաստանական քննիչին՝ ձեռնարկել նախնական քննութեան, որպիսին սկսվեց անմիջապէս, Պետերբուրգի դատաստանական իշխանութեան դատախազի անմիջական հսկողութեամբ և որը շարունակվում է առանց մի փոքր յապաղման։

Ներկայումս, նախնական քննութիւնը պարզել է, որ ձերբակալված անձերից շատերը մեղաւոր են այն բանում, որ նրանք մտել են սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան կազմի մէջ, որն իր գործունէութեան նպատակ է դրել՝ ձեռնամուխ լինել Թագաւոր Կայսրի սրբազան կեանքին և կատարել մի շարք յեղափոխական ակտեր՝ ուղղված Մեծ Իշխան Նիկօլայ Նիկօլայէվիչի և Մինիստրների Խորհրդի նախագահի դէմ, որով այդ խմբակցութեան անդամները ջանացել են ներս սպրդել պալատ, ուր ապրում է Թագաւոր Կայսրը, սակայն այդ ջանքերն աջողութիւն չունեցան»։

Հաղորդագրութիւնը, ինչպէս յայտնի է, Մինիստրների Խորհրդի նախագահը կարդաց Պետական Դումայի մայիսի 7-ի նիստում։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևան, 8 մայիսի։ Այսօր, Երևանից Էջմիածին վերադարձող Էջմիածնի սինօդի պրօկուրօր Ֆրէնկէլի և նոյն սինօդի էքզեկուտոր Տէր-Անտօնեանի վրա, ճանապարհին, ցանկապատի միջից, անյայտ չարագործներ կրակեցին 10 անգամ հրացաններից։ Տէր-Անտօնեանը սպանված է։ Պրօկուրօրը մնաց անվնաս։

(«К.»)

—

Պետերբուրգ, 8 մայիսի։ Պատգամաւոր Օզօլի բնակարանում դատաստանական քննիչը խուզարկութիւն կատարեց։ Ներկայ էր պատգամաւոր Գէրուսը։ Ի միջի այլոց գտնվեցին ընտրողներին ուղղված հեկտօգրաֆիական նամակներ, որոնցով պարզվում է սօցիալ-դեմօկրատների ֆրակցիայի հայեացքները կառավարական դեկլարացիայի, ագրարային և նախահաշւի հարցերի վերաբերութեամբ։

(«Հ. Գ.»)

—

Բագու, 8 մայիսի։ Մայիսի 6-ին, գիշերով, ատրճանակի հարուածներով ծանր վիրաւորվեց պօստ-հեռագրական գրասենեակի կառավարիչ Սինէլնիկօվը։ Կրակողը փախաւ։

(«Հ. Գ.»)

—

Բուշիր, 8 մայիսի։ Եփրատ և Տիգրիս գետերի հովտում ապրող արաբ ցեղերը կրկին ապստամբվել են։ Թուրքաց իշխանութիւնները անզօր են ապստամբութիւնը ճնշելու։

(«Հ. Գ.»)

—

Բելգրադ, 8 մայիսի։ Հաղորդում են, որ Մակէդօնիայում, սերբ և բուլղար հրոսակախմբերի միջև նոր ընդհարումներ են տեղի ունեցել։

(«Հ. Գ.»)

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

I

Ղափանից ստացած մեր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հացահատիկների գները չափազանց բարձրացել են ներկայումս։

Ցորենի պուդը	արժէ	. 3 ր.	»
Ալիւրի	» »	. 3 »	20
Կորեկի	» »	. 2 »	»
Գարու	» »	. 2 »	60
Բրնձի	» »	. 3 »	80

Տեղական հացի պաշարները չափազանց պակասել են, և ժողովուրդը կերակրվում է բերովի հացով։ Սակայն այդ հացը յաճախ անբաւարար է լինում։ Օրինակ՝ Օրդուբադից թուրքերը ալիւր են բերում Ղափան, բայց ստոր տեսակի, որի մէջ երբեմն լինում են այնպիսի խառնուրդներ, ինչպէս որ կիրն է։

Ղափանցիները սպասում են ցորենի՝ Նպաստամատոյց Յանձնաժողովի կողմից։

Նպաստամատոյցը կարգադրել է, որ Աղստաֆայից ուղարկվէ դարձեալ ցորեն վագօններով մինչև Նախիջևան կայարանը և այնտեղից սայլերով մինչև Զանգեզուրի գաւառը։

II

Սակայն կարիքը աւելի մեծ է, քան հասցրած օգնութեան չափը։

«Մշակի» № 65-ում մենք մեր ունեցած տեղեկութիւնների հիման վրա հացի և սերմացուի կարիքը Զանգեզուրի գաւառում հաշւել էինք 210,400 րուբլի։

Ճիշտ է, գիւղացիներին տրվեց օգնութիւն թէ Նպաստամատոյցների և թէ կառավարութեան կողմից, բայց քաղցը շարունակվում է և Յ. Իսրայէլեան իր հեռագրով, տրված ապրիլի 18-ից («Մշակ» № 84), յայտնում է, որ Զանգեզուրում քաղցածների թիւը հասնում է 23,030 հոգու, որոնցից իւրաքանչիւրին հարկաւոր է մի-մի պուդ հաց։ Իսկ աւելի ուշ մայիսի 7-ին նա հասցնում է հացի անհրաժեշտ չափը 32,000 պուդի («Մշակ» № 94)։

«Մշակի» երէկվայ համարում (№ 95) մենք հրատարակեցինք Իսրայէլեանի դիմումը հասարակութեան՝ օգնելու զանգեզուրցիներին հացով, հագուստեղէնով, փողով։

Օգնութեան ժամանակը հէնց այժմ է, քանի դեռ հունձը չէ հասել և հացի մեծ պակասութիւն կայ։

Հունձը սկսվելուց յետոյ հացի պաշարը կաւելանայ և գները կիջնեն, գոնէ ժամանակաւորապէս։

Ա. Ք.

ՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ Անձի անձեռնմխելիութեան խնդրով զբաղվող դումայական մասնաժողովը ընդունեց կառավարական օրինագիծը՝ վերաբերվող 1892 թ. ապրիլի 3-ի կանոնները վերացնելուն, որոնց համաձայն տուգանքներ էին վերցվում Արևմտեան նահանգների և Լեհական թագաւորութեան շրջանների մէջ լեհական լեզուով գաղտնի կերպով ուսուցանելու համար։ Մասնաժողովին մասնակցում էր ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնականը։ Նոյն մասնաժողովը ցանկալի համարեց չընդունել կառավարական այն օրինագիծը, որով առաջարկվում էր իր ուժի մէջ թողնել 1906 թ. դեկտ. 24-ի օրէնքը, որը քրէական պատասխանատուութիւն է որոշում ճառերի և մամուլի մէջ յանցաւոր դրդումները գովաբանելու համար։

ԱՍՏՐԱԽԱՆ, 8 մայիսի։ Դումայի անդամ ղրղզների օրգայի կողմից ընտրվել է առաչին Դումայի նախկին անդամ իրաւաբան, սահմ.-ռամկ. Բախտի-Գիրէյ Կօլուժանօվը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ Խղճի ազատութեան դումայական մասնաժողովը գտաւ, որ կրօնական ընկերութիւնները կարող են կազմվել ինչպէս օրէնսդրական, այնպէս և ադմինիստրատիւ կարգով։

Ագրարային դումայական մասնաժողովը որոշեց իր ոյժի մէջ պահել նոյեմբերի 21-ի օրէնքը, որը իրաւունք է տալիս մայորատի (անդրանիկութեան իրաւունքով ժառանգված), աւատական և կտակով թողնված կալուածքների տէրերին զրկել գիւղացիներին պատկանող հողաբաժինները։

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մայիսի։ Մայիսի 7-ին, երեկոյեան ժամը 9 և 30 րօպէին կայացաւ Պետական Խորհրդի արտակարգ ընդհանուր ժողովը նախագահի օգնական Գօլուբեվի նախագահութեամբ։ Պետական Դումայում արդէն մինիստրների խորհրդի նախագահի կարդացած կառավարչական հաղորդագրութիւնը կարդալուց յետոյ, Խորհրդի նախագահը արտասանեց հետեւեալ ճառը. «Իւրաքանչիւրը մեզանից զրգռված է քաղաքական, տնտեսական և դասակարգային կռւի երևոյթներից, որոնք կատարվում են սպանութիւններով, կողոպուտներով և պայթումներով, պաշտօնեաների և զօրքի ապստամբ դրդումներով և ամեն տեսակ յանցաւոր բռնութիւններով։ Այժմ մենք տեղեկացանք, որ կազմվել է մի համախմբակցութիւն՝ կառավարութեան ձևը բռնութեամբ փոփոխելու, գործադիր իշխանութեան ներկայացուցչի և Կայսերական Տան անդամի կեանքի դէմ մահափորձ կատարելու և մինչև իսկ Թագաւոր Կայսրի սրբազան կեանքի դէմ յանդգնաբար ձեռք բարձրացնելու համար։ Ես պէտք է Խորհրդին ոգևորող զգացմունքների արտայայտիչը լինեմ, ասելով որ պատրաստվելիք չարագործութիւնները խորագոյն ատելութիւն են յարուցում, և մենք տոգորված ենք այն անսահման խնդութեամբ, որ բոլորի աչքից առնվեց. ի դերև ելաւ նոյնիսկ կայսրի սրբազան կենաց դէմ ձեռք բարձրացնելու չարագործների փորձը, և թող ապրէ միշտ և հանապազ Ամենաողորմած Թագաւոր Կայսրը Ամենաբարձրեալի սուրբ հովանաւորութեան ներքոյ, թող երկարատեւ Նրա Թագաւորութիւնը թանկագին Ռուսաստանի բաղդաւորութեան համար»։

Նախագահի ճառը Խորհուրդը լսեց ամբողջ ժամանակ ոտքի վրա կանգնած և վերջացնելուց յետոյ ընդունեց միաձայն ուռայով, որից յետոյ բոլորը երգեցին ազգային օրհներգը։

Նախագահը առաջարկեց Պետական Խորհրդին պարզաբանվել,—կամենում է, արդեօք, դիմել Նորին Մեծութեանը ամենահպատակ հեռագրով և արտայայտել իր ոգի և կենդանութիւն ներշնչող վերացական զգացմունքները։

Ցայտարարվում է ընդմիջում հեռագրի նախագիծը կազմելու համար։

Ընդմիջումից յետոյ նախագահը զեկուցանում է, որ մինիստրների խորհրդի նախագահը մի նամակ է ուղարկել Խորհրդի անունով, որով ցաւակցութիւն է յայտնում, որ ինքը չը կարողացաւ մասնակցել Խորհրդի նիստին։

Մանուխինը կարդում է Թագաւոր Կայսրին ուղարկվելիք հեռագրի հետեւեալ նախագիծը. «Ձերդ Կայսերական Մեծութիւնը. Պետական Խորհուրդը իր արտակարգ ընդհանուր ժողովում լսելով Ձերդ Կայսերական Մեծութեան սրբազան կենաց և մեր պետական կազմի դէմ ուղղված զազրելի մտադրութեան երեան հանելու մասին հրատարակված կառավարչական հաղորդագրութիւնը, առ ոտս Ձեր սփռում է իրան համակող անսահման ուրախութեան զգացմունքները։ Պետական Խորհուրդը մինչև սրտի խորքը զրգռված է բռնութիւնների և չարագործութիւնների աճումից, որոնք կանգ չեն առնում նոյնիսկ յանդգնաբար ձեռք բարձրացնելու Ռուսաստանի մեծութիւնը և պատիւը կրողի կեանքի դէմ։ Թող պահպանէ Ամենաբարձրեալը Իր ամենակարող աջով երկար տարիներ թանկագին հայրենիքի անձնուրաց և մեծահոգի Վերանորոգչին»։

Հեռագրի նախագիծը միաձայն ընդունվում է Խորհրդից, որը որոշում է անյապաղ ուղարկել այդ հեռագիրը կայսրին։

Ապա Խորհուրդը յարգում է Խորհրդի անդամ Էնգելգարդտի միջնորդութիւնը և արձակուրդ է տալիս նրան։

Նախագահը զեկուցանում է որ Խորհրդին ներկայացրել են Պետական Դումային կից դիւանատուն կազմելու օրինագիծը, և աւելացնում է, որ այդ օրինագիծը Պետական Խորհրդի նախագահը յանձնել է ֆինանսական մասնաժողովին։

Նիստը փակվում է ժամը 11 և 5 րօպէին։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մայիսի 3-ին

Բնական օրէնք է, որ երբ մի որևէ բոյս զրկված է լինում իր գոյութեան համար անհրաժեշտ նիւթերից, նա չէ կարողանում երկար ապրել, փչանում է։ Մինչև անգամ եթէ այդ անհրաժեշտ նիւթերից մէկն ու մէկն է պակասում, այդ բոյսը թէև մի առժամանակ ապրում է, բայց նա հետզհետէ թուլանում է և փչանում։ Նոյն դրութեան մէջ են մեր հայ պատգամաւորները։ Նրանք այստեղ գալու օրից արդէն դիմումներ են արել հասարակութեան, մամուլի և ուրիշ հաստատութիւնների միջոցով, որ սրանց տեղեկութիւններ, փաստաթղթեր հասցնեն այն բոլոր աղէտների, սովի և հիւանդութիւնների մասին, որոնք այժմ տիրում են Անդրկովկասում, բայց դժբաղդաբար պէտք է արձանագրել, որ մինչև այժմս ոչինչ շօշափելի գործ չէ արված։

Պատգամաւորներից մի քանիսը ստացել է մի քանի տեղերից տեղեկութիւններ, բայց այդ բոլորը համարեա թէ ոչինչ են այն ահագին կարիքի հետ համեմատած, որ տիրում է այժմս երկրում, և այդ պատճառով միանգամայն կարելի է զարմանալ, թէ ինչու մինչև այժմս այդ գործը չէ կազմակերպված։

Ժամանակը անցնում է, և այն տեղեկութիւնները, որոնք այժմս կարող էին ահագին նշանակութիւն ունենալ, մի քանի ժամանակից յետոյ արդէն ուշացած կը լինեն։

Պետական Դուման, դեռ Զատկի արձակուրդներից առաջ, երբ վերջին նիստում վճռեց տալ 6 միլիոն րուբլի սովեալներին նպաստ և հիւանդութիւնների դէմ մաքառելու համար։ Կառավարութիւնը առաջարկել էր Դումային 5 միլիոն րուբլի, իսկ Դումայի բիւջէտի և մատակարարային կոմիսիաները վճռել էին մի միլիոն րուբլի էլ աւելացնել, և Դուման ընդունեց այդ 6 միլիոնը։ Երկար վիճաբանութեան առարկայ էր այն հարցը, թէ արդեօք այդ գումարը ում յանձնել իրագործելու համար. կենտրոնը և աջակողմեանները առաջարկում էին այդ գումարը յանձնել այն հաստատութեան, որը այժմս գործում է, այն է՝ կենտրոնական կօմիտէին, որի նախագահն է Երմօլօվը և որը արդէն կազմակերպած ունի թէյարաններ, ճաշարաններ և հիւանդանոցներ, ցրուած տեղերում օգնութիւն հասցնելու համար։ Այդ հաստատութիւնը այն է, որին յանձնված է եղել սերմացուի և մատակարարութեան գործը և որի հետեւանքն է եղել Գուրկօ-Լիդվալեան պատմութիւնը։

Ձախակողմեանները առաջարկում են այդ 6 միլիօն րուբլին յանձնել համազեմստվային օրգանիզացիային և ոչ մի դէպքում կառավարութեան ագենտներին։ Սօցիալ-դեմօկրատները նոյնպէս համաձայնվում էին այդ գումարը տալ համազեմստվային օրգանիզացիային. դա մի կոմպրոմիս էր իրանց սկզբունքներին, որովհետև, նրանց կարծիքով, ամբողջ մատակարարութեան գործը պէտք է յանձնել ժողովրդին, բայց երբ ստիպված են ընտրել երկուսից մէկը, յամենայն դէպս պէտք է համաձայնէին այն երկրորդ կէտի հետ։

Կադետները այն առարկութիւնն էին անում, որ եթէ այդ գումարը Դուման վճռէր տալ համազեմստվային օրգանիզացիային, այն ժամանակ այդ գումարը առանց գործադրութեան կը մնայ, որովհետև շատ տեղերում համազեմստվային օրգանիզացիան բաժանմունքներ չունին։ Դուման ձայների մեծամասնութեամբ վճռեց տալ կենտրոնական կօմիտէին։

Հայ և Թուրք պատգամաւորների մէջ միտք էր յղացել, որ այդ գումարի մի մասն էլ Կովկասին յատկացվի, այդ պատճառով պատգամաւոր Տէր-Աւետիքեանը և Շախտախտինսկին դիմում են Ստոլիպինին և Երմօլօվին, որպէսզի Կովկասին այդ 6 միլիոն րուբլուց՝ 2 միլիոն յատկացվի։

Երմօլօվը դրանց պատասխանում է, որ կարելի էր իսկապէս Անդրկովկասին այդ գումարից մի մաս հանել, եթէ նրանց տրամադրութեան տակ լինէր յայտնի փաստեր և տեղեկութիւններ, որ իսկապէս սով գոյութիւն ունի, որ այդ պահանջած գումարը համապատասխանում է իրականութեան։ Եւ որովհետև դժբաղդաբար մեր պատգամաւորների մօտ չեն լինում մանրամասն տեղեկութիւններ, նրանք վճռում են, որ Երմօլօվը հեռագրով տեղեկութիւն հարցնի Փոխարքայից կարիքի չափի մասին և ըստ այնմ որոշի՝ թէ որքան գումար կարելի է յատկացնել Անդրկովկասին։

Անկախ այս հարցից՝ մի խումբ Թուրք պատգամաւորներ, որոնց միացել են և երկու հայ պատգամաւորներ, Պետական Դումային ներկայացրել են մի յայտագիր, որով առաջարկում են Դումային տալ Անդրկովկասին մէկ միլիոն րուբլի սերմացուի և այլ պէտքերի համար, և յոյս կայ, որ Դուման չի մերժել այդ հարցը, այլ կը վճռի դրականապէս։

Այժմս ամբողջ հարցը նրանումն է, որ մեր պատգամաւորների տրամադրութեան տակ շատ քիչ փաստալից տեղեկութիւններ կան։ Այսինքն այստեղ, ի հարկէ, կան տեղեկութիւններ, թէ մօտաւորապէս որտեղ որքան կարիք կայ, բայց Պետական Դումայի կօմիսիաները պահանջում են, որ այդ բոլոր տեղեկութիւնները լինեն շատ մանրամասն, որ ամեն մի գիւղացու կորցրածը և հասած վնասները առանձին-առանձին գրված լինեն, և դա կամ կառավարութեան գործակալների կողմից և կամ էլ Նպաստամատոյց Ցանձնաժողովի կողմից հաստատված։ Այնպէս որ այդպիսի տեղեկութիւններ պէտք է հաւաքել, համախմբել և ուղարկել։

Կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովը կարող էր այդ դէպքում մեծ օգուտ բերել, եթէ կազմակերպէր այդ, և որքան կարելի է շուտով այդ տեղեկութիւնները հաղորդէր Փոխարքային և ուղարկէր այստեղ պատգամաւորներին։

Այս անհրաժեշտ գործ է և եռանդուն կերպով պէտք է իրագործել, որպէսզի երբ Դուման քննելու լինի այդ մէկ միլիոնի հարցը, այն ժամանակ պատգամաւորները ունենան իրանց տրամադրութեան տակ փաստեր և թւեր։

Կենտրոնական կօմիտէն ցանկութիւն է յայտնել, որ Թիֆլիսի Նպաստամատոյց Ցանձնաժողովը անմիջական կապ հաստատէ այստեղի հետ, որպէս զի այդպիսով կարելի լինի աւելի հեշտացնել գործը, և, արագացնելով զանազան տեղեկութիւնների քննութիւնը, կարելի լինի օգնութեան գործն աւելի կանոնաւորել։ Այդ նպատակով կենտրոնական կօմիտէն մի գրաւոր առաջարկութիւն է ուղարկել Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովին։

Արսէն Քալանթար

ՄՆՌՈՂ ԱԶԳՈՒԹԻՒՆ

III

Պարզ է թէ՝ երբ մենք նպատակ ենք դնում պարզելու մի ժողովրդի գոյութիւնը իբրև առանձին ազգութիւն—ինչ տեսակէտով պէտք է ղեկավարվենք «հայութեան դասակարգային կազմուածքը» քննելիս, մենք ուզում ենք տեսնել թէ մեր պայմաններում որքան են կարող նպաստել հայի «ազգային ինքնուրոյնութեան» այս կամ այն դասակարգը։

Ցայտնի է թէ որոշ ազգութիւն կազմելու գլխաւոր գործօններն են՝ ընդհանուր ծագումը, լեզուն, պատմական անցեալը և միասին վարած քաղաքական կեանքը մի պետական կազմի մէջ։

Երբ խախտվում է մի ժողովրդի մէջ քաղաքական ինքնուրոյնութիւնը և նրա ամբողջութիւնը յօշոտվում է մաս-մաս, այն ժամանակ առաջ է գալիս ազգային ամբողջութիւնը վերականգնելու մի ներքին մղում—ազգային զգացմունք իր արտայայտիչ շարժումներով, որոնց նպատակն է բաժան-բաժան եղած հատուածները կրկին միացնելու, ազգային ինքնավար գոյութիւնը դուրս ճնշումներից ազատելու։ Անջատված մասերը միացնող ամենանշանաւոր կապը, ինչպէս և ազգային զգացմունքը բորբոքող գործիքը, լեզուն և գրականութիւնն է։ Առանց այդ կուլտուրական շաղկապի ազգային ինքնուրոյնութիւնը մի անհեթեթութիւն է։ Սակայն ինքը այդ գործօնը իր էութեամբ արդիւնք է մի շարք նպաստաւոր պայմանների. զօռով, արուեստական միջոցներով կենդանութիւն տալ այդ գործօնին, երբ պայմանները իրանց բնական ընթացքով անխուսափելի են դարձնում նրա չքացումը—նոյնն է թէ օզօն գազի ներշնչումով ձգտել երկարելու մի թոքախտաւորի կեանքը։ Դուք պէտք է աշխատէք, որ բնական պայմանները, կեանքի էութիւնը պահպանող գործարանները չը խախտվեն, իսկ երբ ձեր բոլոր ֆօկուսնիկութիւնների հետեւանքը միայն այն է, որ ինքներդ էք խախտում գործարանների կենսունակութիւնը, ինքներդ էք ապականում և դժոխք դարձնում միջնավայրը—էլ օզօնները և հմայքները անզօր են դեր կատարելու։ Երբ ողջամիտ ըմբռնասիրութեան և խելացնոր էքսպերիմենտների զոհ էք դարձնում հէնց այն մասսան, որը առանց ձեր խնամակալութեան լոկ իր բուսական կեանքով, իր տնտեսական և թուական աճողութեամբ իր հողի վրա ապրելով, մի քիչ ուշ, բայց և հաստատ վերածնութեան կը հասնէր, երբ այդ մասսան ձեր ոճրագործ էքսպերիմենտների շնորհիւ մորթոտում են և ցիր ու ցան անում երկրագնդի վրա—դուք, անկոչ «փրկիչներ», պէտք է իմանաք, որ հակառակ ձեր ունեցած «ազգային ձգտումների» միայն մահացու և անբուժելի հարուած էք հասցնում ձեր բուն նպատակին։ Դուք նման էք այն դալլաքներին, որոնք հիւանդի արեան վերջին կաթիլները թափելով սպասում են հրաշագործ հետեւանքներ, դուք նման էք այն ագէտ և շառլատան «բժիշկներին», որոնք զօռ են տալիս լատինական խոհանոցի «ազդու միջոցներին»—սարսափելի դեղերին։ Տարբերութիւնը այն է, որ այդ «բժիշկների» էքսպերիմենտների զոհերը անհատներ են միայն, իսկ ձերինը՝ ամբողջ ժողովուրդ։ Ինչպէս այդ «բժիշկները» ազդու դեղերի անտեղի և անչափ գործածութեամբ միայն չարիք են հասցնում, նոյնպէս և այդ «փրկիչները» իրանց անմիտ զինաշարժութիւններով, «արեան ռօմանտիզմով» և «ապստամբական» տհաս ու խելառ գործելակերպերով միմիայն մահացու հարուածներ են հասցնում ժողովրդին, և գլխաւորաբար նրա այն մասին, որ ազգայնութեան ծառի բուն արմատն է ներկայացնում, այն է՝ իր հողի վրա միապաղաղ զանգուածով նստած գիւղացիութեան, որը մայրենի լեզուի, բանաւոր գրականութեան, ազգային ստեղծագործութեան պահպանողն է։ Հայ ժողովրդի ստուար մեծամասնութիւնն է կազմում այդ գիւղացիութիւնը. պոկէք նրան իր մայր երկրից, հայութիւնը ինչպէս մի արմատահան եղած կաղնի կարճ ժամանակ միայն կը պահպանէ իր ցիրուցան ճիւղերի կանաչութիւնը, ապա կը չորանայ…

Ահա այդ գիւղացիութեան ներկայ դրութեան հետ ծանօթանալը պէտք է լինի մեր դրած խնդրի պարզաբանութեան կարևոր կողմերից մէկը։

Անկախ

(Կը շարունակվի)

ՕՐՎԱՑ ԽՆԴԻՐՆԵՐ

XVII

Վիզը ծռած, փափախը մինչև աչքերը խրած, կիսամերկ դրութեան մէջ մի խեղճ, անճար գիւղացի կայարանին մօտեցաւ։ Դռան առջև կանգնեցրեց նրան պահապանը.

—Չի կարելի…

—Թող տուր, ես գանգատ ունեմ,—մրմնջաց գիւղացին։

Բայց պահապանը անդրդուելի էր…

Ի՞նչպէս կարելի էր այդ կիսամերկ, հասարակական տականքների զոհ դարձած մարդուն թողնել, որ ներկայանայ նոյն հասարակութեանը իր թշուառ վիճակով և կարեկցութիւն շարժէ։

Եւ անճար գիւղացին ձեռքերը կրծքին խաչած՝ պատի տակ կանգնած հեկեկում էր։

Կարեկցող մարդիկ շրջապատած նրան հարց ու փորձ էին անում, լսում իրողութիւնը։

Մօտեցաւ ոստիկանը. նա էլ մարդ էր և պարտաւոր էր իմանալ իրողութիւնը, պարտաւոր էր օգնել թշուառին, պաշտպանել նրա իրաւունքը…

—Չի կարելի հաւաքվել,—նկատեց նա։ Բայց տեսնելով կիսամերկ գիւղացուն, հարցրեց.—Ի՞նչ ես անում այստեղ։

—Խիղճ, արդարութիւն եմ որոնում,—հեկեկալով շշնջաց դողդոջուն ձայնով գիւղացին։

Հարցրեց, լսեց իրողութիւնն օրէնքի սպասաւորը, և առաջին մխիթարական խօսքը, կարեկցական վերաբերմունքը դէպի գիւղացին ահա թէ որը եղաւ.

—Իսկ անցագիր ունի՞ս,—հարցրեց խստութեամբ եռանդոտ պաշտօնեան։

Կարծէ էր միթէ կողոպտված, կիսամերկ մարդը, որի ցնցոտի արխալուղն անգամ հանել էին վրայից սրիկաները, անցագիր ունենալ…

Եւ թշուառ մարդուն, բանտը ցոյց տալով, ասացին.

—Գնա, այնտեղ է՛ խիղճը, և արդարութիւնը։

Արդարութիւն ու խիղճ որոնելու համար նախ և առաջ անցագիր պէտք է ունենալ…

Դա իրականութիւն է։

XVIII

Ղազախ գաւառի Մոսէս գիւղացի Արտեմ Յովակիմեանցը իր բազմանդամ ընտանիքը սովի ճանկերից ազատելու նպատակով մուրացկանի ցուպը ձեռքն առած գալիս է Թիֆլիս։ Նա իր միակ յոյսը դրել էր Նպաստամատոյց Ցանձնաժողովի և բարերարների օգնութեան վրա…

Հազիւ հաւաքելով 6—10 րուբլի, սրանից մի շաբաթ առաջ ուզում է վերադառնալ հայրենիք և գնում է կայարան։ Գնացքն արդէն գնացել էր, և նա ստիպված էր սպասել յաջորդ գնացքին։ Անփորձ գիւղացին, գլուխը կորցրած՝ չը գիտէր ինչ անել… Այդ բանից օգուտ են քաղում մի քանի հայ սրիկաներ, ազգասիրաբար, իբր թէ, կարեկցելով խեղճ հայ գիւղացուն հրաւիրում են իրանց մօտ գիշերելու։

Միամիտ մարդը, հաւատալով նրանց, գնում է։ Սրիկաները խաբելով տանում են նրան մի խուլ անկիւնում կողոպտում, խլում են մօտը եղած մի քանի րուբլին, հանում են մինչև իսկ վերնաշորերը և կիսամերկ, միայն շապկով, սպառնալիքներով բաց թողնում։

Ո՞ւր գնար և ում գանգատվէր այդ մութ գիշերին։

Ժամի 10-ին նա վերադառնում է կրկին կայարան և եղելութեան մասին գանգատվում, արդարութիւն խնդրում։ Բայց, փոխանակ գանգատի վրա ուշադրութիւն դարձնելու, անցագիր չունենալու համար տանում, բանտարկում են։

Մի ամբողջ շաբաթ է անցնում այդ օրից և բոլորովին պատահաբար մի ուրիշ մարդ՝ Կարմիր-Աղբիւր գիւղացի Շամիր Մելեանցը իմանում է, որ Արտեմը բանտարկված է…

Նրան էտապով, երևի, հայրենիք կուղարկէին, եթէ կոմիսակի մարդ, մի բարի օֆիցեր չը միջնորդէր ազատելու խեղճ գիւղացուն, որի հացի կարօտ ընտանիքն օրէցօր իր կերակրողին, իր աշխատաւոր ձեռքին էր սպասում։

Դատարկ ձեռքերով՝ հեռացաւ Արտեմը քաղաքից։ Նա իր անձնական փորձով համոզվեց, որ քաղաք կոչվող մեծ շուկայում խիղճ և արդարութիւն որոնելու համար էլ անցագիր պէտք է ունենալ։

Առօրեայ փաստերն այդ են վկայում։

Սակայն հէնց այս փաստը ինձ յիշեցրեց ժողովրդական մի բնորոշ ծիծաղաշարժ աւանդութիւն։

Ասում են, որ աշխարհի ստեղծագործութեան ժամանակ, երբ, համարեա, բոլոր բանն արդէն ստեղծված էր, Աստծուն յիշեցրին, որ մի բան մոռացել է և անհրաժեշտ է ստեղծել, այն է՝ կարգապահութեան վրա հսկող ոստիկան։

Աստուած թէև աշխատեց համոզել, որ դա աւելորդ է, որ իրանք կը գզգզան այդ խնդիրքի համար, բայց, զիջանելով նրանց թախանձագին աղերսին, վերցրեց մի բուռը հող, փչեց նրան, և միջից դուրս եկաւ մի հսկայ ոստիկան։

Վերջինս, տեսնելով իր ստեղծողին, լուրջ կանգնեց ու հարցրեց. «Անցագիր ունի՞ք»։

Միշտ նոյնանման բան է և այս դէպքում։

Լ. Դանիէլեան

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Նախկին տարիներում, երբ ռուսաց համալսարանները դեռ ինքնավարութիւն չէին ստացել, բացի գիմնազիայի աւարտողներից միւս միջնակարգ դպրոցներ աւարտողները իրաւունք չունէին համալսարան մտնելու. բացառութիւն վերապահված էր միայն ռուսաց հոգևոր սեմինարիաներին, որոնց աւարտողները լրացուցիչ քննութիւն տալուց յետոյ կարող էին այդ իրաւունքը ձեռք բերել։ Հայոց թեմ. դպրոցները և ճեմարան աւարտողները կատարելապէս զրկված էին այդ իրաւունքներից. միայն ճեմարանաւարտներից մի երկու հոգի ընդունվել էին, որոնցից մէկի ընդունելը թիւրիմացութեամբ է եղել և կարծվել է թէ մեր ճեմարանն էլ նոյն իրաւունքն ունի, ինչ որ ռուսացը, իսկ միւսներին ընդունել են ուսուցչապետների մի քանիսի երաշխաւորութեամբ. և այդ շատ պարզ պատճառով, որովհետև մինչև այժմ լուսաւորութեան մինիստրութիւնը, առաւել ևս համալսարանների խորհուրդը տեղեակ չեն մեր թեմ. դպրոցների և ճեմարանի ծրագրին, հետեւապէս և ոչ մի հնարաւորութիւն չը կար մեր դպրոցաւարտներին առանց պատշաճաւոր քննութեան համալսարաններում ընդունելու։ Այսպիսով ամենայն տարի հայոց թեմ. դպրոցները աւարտողները զրկվում են բարձրագոյն ուսումից և կամ բաւական տարիներ կորցնելուց ու պատրաստվելուց յետոյ շատ քչերին հազիւ է աջողվում համալսարանի շէմքը կոխել. ոմանք էլ դիմում են արտասահման, ուր մեր դպրոցների վկայականները ի նկատի են առնվում։ 9 երբեմն և 12 տարի ուսում ստանալուց յետոյ մեր դպրոցաւարտները մնում են տարտամ դրութեան մէջ, շնորհիւ այն հանգամանքի, որ ռուսաց բարձրագոյն դպրոցներում շարունակելու արտօնութիւնը չունէին և ընտրում էին կամ ուսուցչական ասպարէզը, երբ դպրոցները բաց էին և կամ ծառայութեան մէջ էին մտնում. շատ քչերն են հոգևորական դառնում, թէև մեր միջնակարգ դպրոցների գլխաւոր նպատակը այդ է համարված մինչև այժմ՝ սկսած 1815 թւականից և մնում է առանց փոփոխութեան, առանց արդիւնքի։

Ո՞վ է իսկապէս պատճառը, որ իւրաքանչիւր տարի մօտ 100,000 ր. ծախսելուց յետոյ մեր դպրոցաւարտները զրկվում են ռուսաց համալսարաններից և չեն ծառայում այն նպատակին, որ ներկայումս անհրաժեշտ է մեզ համար. երկար ջանք ու աշխատանք գործադրելուց յետոյ դարձեալ ասպարէզի վրա մնում են միայն մի քանի անհատներ՝ հայի կեանքով և գրականութեամբ հետաքրքրվող, այն էլ մեծ մասամբ ոչ մեր դպրոցներից. եղած։ Դրա պատճառը մեր հայերիս անհեռատեսութիւնն ու մեր ապագայ սերունդի մասին չը մտածելն է, մեր անփութութիւնն ու մեր կեղծ ուսումնականութիւնն է. բաւական էր մի փոքր ջանք և ուշադրութիւն և գիւղացու կոպէկներով թեմ. դպրոցները աւարտող շատ երիտասարդներ կունենայինք բարձրագոյն կրթութեամբ։

1892 թ. երբ թեմական դպրոցը աւարտեցին 7 հոգի, վերջիններս դիմեցին տեսչին, թէ այսուհետև ինչ պիտի անեն կամ ուր պիտի գնան. տեսուչը նոր մարդ էր, ազատամիտ ուղղութեամբ և հոգևոր միտումներից ու քարոզից հեռու. նա մի քանիսին խորհուրդ տուեց Լազարեան ճեմարան գնալ և խոստացաւ օգնել՝ մտնելու. միւսներին ուսուցչական ասպարէզը մատնանիշ արաւ. դրանից յետոյ երկու հոգի գնացին Մոսկվա, ուր երկար տանջվելուց յետոյ մէկին հազիւ աջողվեց մտնել Լազարեան ճեմարանը, իսկ միւսը կորցրելով դարձաւ Բագու. միւսները փորձեցին ուսուցչական ասպարէզը, բայց ցենզի պատճառով աջողութիւն չունեցան և շուտով այդ էլ թողեցին. բոլոր ճանապարհները փակ էին, ուստի մտան ծառայութեան։ 1897 թ. 9 հոգի աւարտեցին Գէորգեան ճեմարանը. դարձեալ նոյն օրհնասական միտքը, թէ ինչ պիտի անեն, տանջում էր բոլորին. միակ ճանապարհը, որ ճեմարանի վարչութիւնը առաջարկում էր, այդ հոգևորական դառնալն էր. ոչ մէկը ցոյց չէր տալիս, թէ ինչպէս կարելի է ռուսաց համալսարան մտնել, որ աւելի անհրաժեշտ ու ցանկալի էր։

Նոյն հարցերը կարող են իրաւամբ տալ իրանց և ներկայումս հայոց դպրոցներ աւարտողները, քանի որ ոչինչ չէ փոխվել և փոխվելու յոյս էլ չէ նախատեսնվում, քանի որ մեր դպրոցների կառավարիչները չեն բարեհաճում ասպարէզ բաց անել իրանց շրջանաւարտների առաջ և ձգում են նրանց կեանքի ասպարէզը կարծես ասելով. «գնա, ինչ ուզում ես՝ դարձիր, ահա քեզ աւարտման վկայական»։ Բայց իսկապէս մեր դպրոցների վարչութիւնը կարծէ է որոշ չափով իրաւունք ձեռք բերել, որ մեր դպրոցաւարտները առանց դժուարութեան կարող լինեն համալսարան մտնել. այդ հարցին պատասխան կարող է լինել այն, ինչ որ ասել և միշտ էլ ասում են պետական համալսարանի ռեկտորը, պրոֆեսորներից մի քանիսը. «պաշտօնապէս չը գիտենք ձեր միջնակարգ դպրոցների ծրագիրը, ինչ առարկաներ են անցնում և ի՞նչ չափով. ինչո՞ւ ձեր դպրոցների կառավարիչները պաշտօնապէս չեն ներկայացնում իրանց ծրագիրը գոնէ համալսարանների խորհրդին, որ կարելի լինի մի անգամ ընդ միշտ իմանալ, թէ արդեօք կարող կը լինեն ձեր շրջանաւարտները համալսարանի դասընթացը լսել, կամ ինչո՞ւ պատշաճաւոր եղանակով խնդիր չեն ներկայացնում նոյն իրաւունքը ստանալու, ինչ որ ռուսաց սեմինարիաներն ունեն»։

(Կը շարունակվի)

Շահիբէգեան

ԴՈՒՄԱՅԻ ԿՈՒԼՈՒԱՐՆԵՐՈՒՄ

«Русь» լրագրի ասելով, վերջին օրերս Պետական Դումայի կուլուարներում յաճախակի է լսվում Պետրօվ քահանայի անունը։ Սպասում են նրա գալուստին։ Բնորոշ է, որ Պետրօվ քահանային սպասում են և՛ կադետները, և՛ նրանց կողքին նստած ձախակողմեան կուսակցութիւնը։ Ի հարկէ, վերջինս յոյս չունի, որ Պետրօվ քահանան կարող է յարել իրան, սակայն լուրերը շարունակվում են։ Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ Չերեմենեցկի վանքից լուրեր են ստացվել, որ Պետրօվ քահանան շատ դժգոհ է մնացել կադետների վերջին գործողութիւններից և չէ համակրում նրանց բռնած տակտիկային Դումայում։ Աշխատաւորականները սպասում են, որ Պետրօվ քահանան իրանց կը միանայ։ Այդպիսի ենթադրութիւններ Դումայում լսվում էին երէկ։ Պետրօվ քահանային սպասում են մի քանի օրից յետոյ։ Մայիսի 7-ին լրանում էր նրա վերադարձի ժամանակը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՐՆԵՍՏ ՀԵԿԿԵԼ ԵՒ ՄՕՆԻԶՄ

(Նամակ Գերմանիայից)

(Պրօֆեսօրութեան 45-ամեակի առիթով)

Ենա, մայիսի 12-ին

Այս տարի լրացաւ պրօֆ. Է. Հեկկելի 45-ամեակը ուսուցչապետութեան։ Հեկկելը ներկայ աշխարհահռչակ բնագէտներից մէկն է և Դարվինից յետոյ զարգացման թէօրիայի ամենականաւոր պաշտպանը և այդ տեսութիւնը նորանոր ուսումնասիրութիւնների միջոցով աւելի դրական հիմքերի վրա դնողը։ Անպայման արժէ այս մեծ գիտնականի հետ աւելի մօտ ծանօթութիւն, քան այդ, իսկապէս, գոյութիւն ունի մեր հասարակութեան մէջ։

Էրնստ Հեկկելը ծնվել է 1834 թւի *) փետրվարի 16-ին մի իրաւաբանի ընտանիքում. Նրա մայրը խելացի և գեղեցկութեան սիրահար մի կին էր, որը իր այս յատկութիւնը հէնց փոքրուց պատուաստեց իր որդու մէջ և մանաւանդ հոգ էր տանում, որ նրա մէջ զարգանայ բնութեան սէրը։—Վաղ երեխայութեան և մեծ խելքի տէր պատանին 18 տարեկան գիմնազիան աւարտելուց յետոյ՝ սկսեց Բերլինում, Վիւրցբուրգում, և ապա Վիեննայում բժշկութիւն ուսումնասիրել։ 1875 թւին բժշկութեան քննութիւն տալուց յետոյ թողեց միանգամայն բժշկական պրակտիկայով զբաղվելու միտքը և իրան բնագիտութեան ուսումնասիրութեանը նուիրեց։ 1861 թւին Հեկկելին աջողվում է Ենայի համալսարանում կենդանաբանութեան դասախօսի պաշտօն ստանալ և այդ ժամանակից սկսած մինչև այժմ գործել է նոյն համալսարանում, իբրև պրօֆեսօր առանց գրաւվելու ուրիշ մեծ քաղաքների համալսարանների հրաւէրներով։ Ազատ ժամանակները և կամ երբեմնակի արձակուրդներ ստանալով Հեկկելը ճանապարհորդել է աշխարհի զանազան կողմերը իր բնագիտական ուսումնասիրութիւնների համար նորանոր նիւթեր ձեռք բերելու և իր աշխարհահայեացքը ՛ընդլայնելու, ի միջի այլոց նա եղել է և մեր Կովկասում և Թիֆլիսում։

Սխալ կը լինէր կարծել, թէ Հեկկելը միմիայն յայտնի բնագէտ է, բացի այդ, նաև 19-րդ դարու ամենայայտնի բնափիլիսոփաներից է. Նրա վերջերս հրատարակած «Տիեզերական առեղծուածներ» բնափիլիսոփայական գիրքը ահագին աղմուկ հանեց թէ գերմանական և թէ արտասահմանի գրականութեան մէջ. հարիւրաւոր դէմ կամ պաշտպանողական գրքեր, բրօշիւրներ են լոյս տեսել այդ գրքի վերաբերմամբ և գուցէ 19-րդ դարում և ոչ մի փիլիսոփայական հեղինակի աջողված լինի կարճ ժամանակում այնպիսի կրքոտ պայքարի առիթ դառնալ, ինչպէս Հեկկելը։

Հետաքրքիր է տալ օբեկտիւ կերպով Հեկկելի մի քանի բնափիլիսոփայական մտքերի նկարագիրը, որով պարզված կը լինէր, թէ ինչ ուղղութեան մտածող է նա, թէև համաձայն չը լինելով նրա մի քանի կարծիքների հետ և չընդունելով հանդերձ, որ շատ հարցեր այնպէս հեշտ լուծելի են, ինչպէս այդ անում է Հեկկելը։

Տիեզերքը, ըստ Հեկկելի *), մի ամբողջութիւն է, որը իշխված է հաստատ և անփոփոխ բնական օրէնքներից. տիեզերքը իր մէջ ընդգրկում է անսահման տարածութիւնը, անթիւ համաստեղութիւնները, մոլորակները իրանց վրայի կեանքով, մի խօսքով այն, ինչ գոյութիւն ունի բնութեան մէջ և այդ բոլոր ըստ երևոյթին տարբեր գոյութիւնների մէջ իշխում են բնութեան միևնոյն յաւիտենական օրէնքները։ Միշտ չէ այն հեղինակների կարծիքը, թէ պէտք է անօրգան և օրգանաւորի կեանքը իրարից զատել, որ օրգանական կեանքի մէջ ոչ միայն գործում են քիմիական և ֆիզիքական օրէնքները, այլև մի առանձին ոյժ, այսպէս կոչված «կեանքի ոյժը (Lebenskraft), որը կարգաւորում և իշխում, ուղղութիւն է տալիս օրգանաւորների կեանքի զարգացման։ Այս կարծիքը սխալ է. օրգանական կեանքի մէջ չեն գործում այդպիսի մետաֆիզիքական ուժեր, այլ միայն քիմիական և ֆիզիքական։

Բնութեան մէջ չը կայ դադար, այլ անընդհատ զարգացում, և այդպէս միշտ գենեզիսի մէջ է բնութիւնը. զարգացման սկիզբը և վախճանը մեզ յայտնի չէ, այլ միայն այդ մեծ պրօցէսի մի որոշ մասը։ Ոչ միայն ընդհանուր տիեզերքը, այլ և օրգանական կեանքը ենթակայ է մշտական զարգացման, ցածից, կամ պարզից, դէպի բարդը և վերը։ Մասնաւորապէս օրգանական կեանքի զարգացման ենթակայ լինելու ապացուցման վրա է աշխատել Հեկկելը իր ամբողջ կեանքում և այդ տեսութիւնը աւելի գիտական հիմքերի վրա դրել։ Նախկին ժամանակները ընդհանրապէս մարդուն բնութիւնից հանել և նրանից բարձր դնելուն էր ձգտում մտածող միտքը, սակայն ներկայ բնագիտութիւնը, մանաւանդ Դարվինի և Հեկկելի հետազօտութիւններից յետոյ, չէ կարող մարդուն դուրս դնել կենդանական կեանքից. մարդը կենդանական կեանքի զարգացման արգասիքն է, որը ցոյց է տալիս նրա անատօմիական և հոգեբանական կազմը. զարգացման օրէնքին է ենթակայ ուրեմն և մարդկային կեանքը, ինչպէս և ամեն մի կեանք։

Մարդը մի աշխարհայեացք, մի կարծիք է կազմում երկրի մասին ոչ թէ իր մէջ ապրող մի անդրբնական ուժի զօրութեամբ, այլ բանական մտածման և փորձի միջոցով, որը ստանում ենք մեր զգայարանքների միջոցով դրսի աշխարհից ստացած տպաւորութիւններից, որը կատարվում է հետեւեալ կերպով. այդ զգայարանքների ստացած տպաւորութիւնները ուղեղի այսպէս կոչված, «մտածման օրգաններում իրար հետ կապակցվում և դառնում են մտածում, մի հայեացք, որը բնագիտութեան մէջ դեռ վիճելի մի խնդիրն է, սակայն Հեկկելը այդ արդէն պարզված է համարում։ Ուրեմն մեր ճանաչողութիւնը կամ իմացողութիւնը ոչ թէ a priori է, այլ posteriori—այսինքն փորձից առաջացած։ Մարդու մէջ չը կան երկու էութիւններ, այլ միմիայն մի էութեան երկու կողմերը՝ հոգեկան և մարմնական։

Բնութիւնը և աստուածութիւնը միևնոյն են. եթէ Աստուած գաղափարի տակ ոմանք հասկանում են մի վերին անձնաւորութիւն, որը մարդկանց պէս մտածում, ապրում, ստեղծում, վարձատրում, պատժում է և այլն, այդ ըմբռնումը հիմնված է անտրոպոմորֆական հասկացողութիւնների վրա։ Հեկկելի կարծիքով աստուածութեան գաղափարը բնագիտութիւնը այն ժամանակ հիմնաւոր կընդունի, եթէ այդ գաղափարի տակ հասկացվում է բոլոր երևոյթների վերջին, անճանաչելի պատճառը, «անգիտակից, ենթադրական սուբստանցի սկզբնական հիմքը»։ Հեկկելը ընդունում է, որ բնութեան մէջ եղող բոլոր պրօբլեմները լուծված են, բացի սուբստանցի-պրօբլեմից,—սկզբնական հիմքից, որը, այսինքն այդ անճանաչելին, անուանում է Աստուած։ Հեկկելը Սպինօզայի պէս մօնիստ է, այսինքն, որ բնութիւնը միևնոյն սուբստանցի, միևնոյն էութեան արտայայտութիւնն է երկու ձևերի մէջ. մի անգամ նա մեզ իբրև զգացող և մտածող և միւս անգամ իբրև տարածական մատերիա է երևում. սակայն մատերիան և հոգին տարբեր, իրարից անկախ և ինքնուրոյն էութիւններ չեն, այլ իրար հետ շաղկապված և միևնոյն էութեան (սուբստանցի) տարբեր ատրիբուտները (յատկանիշները)։ Ոչ միայն օրգանական, այլ և անօրգան մատերիային յատուկ է զգացում և կամք, կամ թէ չէ զգացում և ձգտում (ցած աստիճանի)։ Այս հիմնական տարրերը մարդու մէջ իրանց կատարելութեանն են հասնում։ Ուրեմն Հեկկելը մօնիզմի պաշտպան է, որը ուզում է բնութիւնը մի հիմունքից, մի պրինցիպից բացատրել, միւս կողմից նա պանթէյիստ է, որովհետև ընդունում է, որ աստուածութիւնը արտայայտվում է բնութեան մէջ և եթէ մենք նրա մասին մի բան իմանալ կարող ենք, այդ միմիայն բնութիւնից կարելի է ստանալ։ Նա հակառակորդ է փիլիսոփայական դուալիստական ուղղութեանը, որը ընդունում է բնութիւնը հոգուց և մատերիայից կազմված և որոնք հիմնաւորապէս տարբեր երևոյթներ են։ Միւս կողմից դէմ է աստուածաբանական այն ուղղութեան, որը աստուածութիւնը բնութիւնից դուրս է ընդունում, իբրև մի առանձին, անձնաւոր էութիւն։

Ահա սրանք են Հեկկելի փիլիսոփայական գլխաւոր թէզերը. այս հայեացքները պաշտպանելու և տարածելու համար Գերմանիայի զանազան քաղաքներում կազմակերպվել են այսպէս կոչված «մօնիստների դաշնակցութիւն» (Monistenbund)։ Առաջինը կազմվել է Ենայում 1906 թւին Հեկկելի և այլ ուրիշ յայտնի մօնիստների ղեկավարութեամբ և ահա այս վերջին երկու տարվայ ընթացքում ահագին ոյժ է ստացել այդ ընկերութիւնը. ոչ միայն Գերմանիայում, այլ և բոլոր կուլտուրական երկրներում իր ճիւղերն ունի, նոյնիսկ Պարսկաստանում ևս անդամներ ունի։ Այդ ընկերակցութեան ծրագրի մէջ ոչ միայն մօնիստների փիլիսոփայական դաւանանքն է դրված, այլ և կուլտուրական մի քանի խնդիրների հոգս։

—Թողնում ենք այն խնդիրը, թէ որքան նպատակայարմար է փիլիսոփայական աշխարհայեացքի վրա ընկերակցութիւն կազմելու խնդիրը, քանի որ մեր նպատակն էր միմիայն օբեկտիւ կերպով տալ իրողութիւնները,

Գ. Էդիլեան

---

*) A. Dodel. «Ernst Haeckel als Erzieher».

*) E. Naeckel: «Die Veltrāthsal» և «Der Monistenbund».

—Լրագիրներում լոյս տեսան, որ զինուորական մինիստրը համաձայնուել է հրատարակել Պետական Դումայի ապրիլի 16—17-ի դռնփակ նիստերի արձանագրութիւնները Զօհրաբեանի ինտերպելացիայի առիթով: Այժմ պարզւում է, որ այդ լուրը սխալ է: Մինչև այժմ զինուորական մինիստրից պաշտօնական պատասխան այդ մասին դեռ ևս չէ ստացւել, միայն Դումայի քարտուղար Չելնօկովի հետ ունեցած մասնաւոր խօսակցութեան ժամանակ գեներալ Ռեդիգերը յայտնել է, որ օրագիր-արձանագրութեան հրատարակութիւնը անհարմար է համարում, որովհետև այնտեղ կան այնպիսի խիստ տեղեր, որոնք հրատարակել անհնարին է: Իսկ լոյս ընծայել լոկ ճառերի մի մասը, մինիստրի կարծիքով, նոյնպէս անյարմար է, որովհետև նիստերի օրագիրը այդ դէպքում տենդենցիոզ բնաւորութիւն է կրում:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի: Նիստը բացւում է 2 ժամ 14 րոպէին: Նախագահում է Պօզնանսկին:

Կառավարական օրինագծերի ցուցակը կարդալուց յետոյ, առաջարկւում է շնորհաւորական հեռագիր ուղարկել ֆինլանդական սէյմին: Առաջարկը ընդունւում է բարեկամական ծափահարութիւններով. ձեռնպահ են մնում աջակողմեանները, որոնք յայտնում են, որ իրանք դէմ են ոչ թէ շնորհաւորելուն, այլ նրա խմբագրութեան:

Դուման ընդունում է Բակունինի պաշտպանած առաջարկութիւնը—ընդունել նակազի մի քանի յօդուածները, որոնք վերաբերում են երեք հոգուց բաղկացած մի կարգադրիչ մասնաժողով կազմելուն, որը վարելու է Դումայի ճաշապահական, դրամական, առողջապահական, բժշկական և տնտեսական խնդիրները:

Հերթին դրւած է նակազը մշակող մասնաժողովի զեկուցագիրը:

Մակլակօվը մանրամասն պատճառաբանում է, որ մասնաժողովի մտցրած նակազի 4 և 5-րդ յօդուածները գլխաւոր նպատակ ունեն սահմանափակել անպտուղ վիճաբանութիւնները և թեթևացնել ու կարգաւորել Դումայի օրէնսդրական աշխատանքը: Դումայի գործունեայ լինելը ամենալաւ աշխատավարձը կը լինի ժողովրդի աչքում: Դումայում չը լուծւած բազմաթիւ գործերի հետ ծանօթանալով, մասնաժողովը տեսաւ, որ «Դուման պահպանեց» յօդուածը պէտք է փոխել «Թող Դուման հեռու մնայ իր սեփական պերճախօսութիւնից» յօդուածի:

Պարչևսկին, Կուսքենսկին, Բերեզինը, Կիզեվետտեր, Դեմեանօվը, Մանտելբերգը, Միրսկին, Կապուստինը, Ռօդիչևը, Սինադինօն մասնակցում են ընդհանուր վիճաբանութիւններին:

Կարծիքները բաժանւում են, մի քանիսները 53—60 յօդուածների մէջ տեսնում են անհրաժեշտ գիլիօտին՝ անպտուղ վիճաբանութիւնների համար, միւսները ասում են, որ այդ յօդուածներով սահմանափակւում են փոքրամասնութեան իրաւունքները:

Մակլակօվը ապացուցանում է, որ ոչ մի սահմանափակում չը կայ փոքրամասնութեան իրաւունքների վերաբերութեամբ:

Դուման ընդունում է 53—60 յօդուածները միաձայն, բացի 56-րդ յօդուածից, որը ընդունւում է 200 ձայնով ընդդէմ 124-ի: Հակառակ ձայն են տալիս սոց.-յեղափոխականները, ժողովրդական սոցիալիստները, լեհական կոլօն և աջակողմեանների մեծամասնութիւնը:

Կարճ վիճաբանութիւններից յետոյ, մասնաժողովի խմբագրութեամբ ընդունւում է 61—73-րդ յօդուածները, որոնցով որոշւում է օրէնսդրական գործերի կատարման եղանակը:

Ապա ընդունւում են 74—80 յօդուածները, որոնք որոշում են գործերի կատարման ձևը ըստ հարցապնդումների—պատգամաւորներին արձակուրդ տալու, նրանց պատասխանատւութեան ենթարկելու նկատմամբ:

Ընդունւում են Դեմեանօվի և Շիրսկու ուղղումները, մերժւում է Մանդելբերգի ուղղումը:

Որոշւում է, որ հարցապնդումներին ընթացք տալու հարցի նկատմամբ թոյլատրւում է միայն մէկ ճառ և մէկ հատ էլ նրա դէմ, եթէ ընդդիմախօսական ճառը արտասանվի, այն ժամանակ հարցապնդման հեղինակը կարող է կրկին պատասխանել:

Առանց վիճաբանութիւնների ընդունւում են 81—89-րդ յօդուածները, որոնցով որոշւում է նիստերը նշանակելու և բացման, նրանց ընդմիջումների և փակելու կարգը:

Մասնաժողովի առաջարկութեամբ նակազը քննելու առաջարկը մերժւում է:

Նիստը փակւում է 5 ժամ 50 րոպէին: Հետևեալը կը կայանայ մայիսի 10-ին: Պարապմունքի առարկաներն են—նակազի քննութեան շարունակութիւնը և ագրարային վիճաբանութիւնները:

ՀԱՆԵԼՈՒԿԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Յայտնի է, որ հին ժամանակներում թագաւորներն ու իշխանները սովորութիւն ունէին իրանց մօտ մի ծաղրածու պահել: Պատմում են, որ այդպիսի ծաղրածուներից մէկը մի օր իր իշխանին այսպիսի մի հանելուկ է առաջարկում. կարելի՞ է արդեօք այնպիսի մի յանցանք գործել, որից յետոյ ներողութիւն խնդրելն ու արդարանալու պատճառաբանութիւնը աւելի ևս ծանրացնի յանցանքի բնաւորութիւնը: Իշխանը այդ հանելուկին մի շարք լուծումներ առաջարկելուց յետոյ, վերջ ի վերջոյ ծաղրածուից է պատասխան պահանջում: Իսկ սա խոստանում է գործնականապէս այդպիսի մի յանցանք գործել, միայն թէ իշխանը թող չը մոռանայ այդ հանելուկը և չը պատժի իրան գործված յանցանքի և խնդրւած ներողութեան համար:

Անցնում է մի քանի օր: Իշխանը նոյնիսկ մոռանում է հանելուկի մասին, իսկ ծաղրածուն, հէնց այդ հանգամանքից օգտւելով, մի օր դարան է մտնում իշխանի ննջարանի դռան ետևում և, երբ իշխանը ներս է մտնում, իսկոյն վրան է ընկնում ու պինդ համբուրում: Իշխանը այդպիսի յանկարծակի յարձակումից վախեցած և, առանց ուշադրութիւն դարձնելու որ համբուրելու նպատակով էր միայն յարձակումը գործվել, խիստ պայրանում է ծաղրածուի վրա և կամենում է տեղն ու տեղը պատժել: Իսկ ծաղրածուն, առանց իրան կորցնելու, իսկոյն չոքում է և աղերսական ձայնով ասում.

—Ներողութիւն, իշխան, ես այնպէս կարծեցի, թէ ներս մտողը իշխանուհին էր:

—Ախ դու, գարշելի,—գոչում է իշխանը, ծաղրածուի կոկորդից բռնելով,—քո ներողութիւն խնդրելը աւելի ծանրացնում է յանցանքդ:

—Ախր ես էլ հէնց այդ էի ուզում,—հազիւ հազ կարողանում է արտասանել խեղդվող ծաղրածուն,—յիշեցէք առաջարկածս հանելուկը:

Իշխանի կատաղութիւնը րոպէապէս ծիծաղի է փոխվում, և նա բաց է թողնում ծաղրածուին իր ճանկերից:

Այդ ծաղրածուի հանելուկն են ինձ շարունակ յիշեցնում Ռուսաստանի «սահմանադրական» կարգերն ու ժողովրդին տուած ազատութիւնները, և ամեն օր իմ գլխումս էլ նոր ու նոր հանելուկներ են ծագում, և այնպիսի հանելուկներ, որոնք գուցէ շատ աւելի բարդ են ու դժուար լուծելի, քան յիշեալ ծաղրածուի առաջարկածը: Այ, թէկուզ վերցնենք հէնց այսպիսի մի հանելուկ. ինչպէս և ինչ տեսակի սահմանադրական կարգեր կարելի է ստեղծել մի երկրում, որ ժողովուրդը շատ աւելի 'բռնութիւնների ենթակայ լինի, քան բռնապետական ռէժիմի ժամանակ: Կամ, վերցնենք այս միւսները. ինչպէս և ինչ ձևով կարելի է մի երկրում անհատի անձեռնմխելիութիւն յայտարարել, որ այդ յայտարարութիւնից յետոյ անհատները շատ աւելի ձեռնմխելի դառնան: Ի՞նչպէս կարելի է մի որևէ հաստատութիւն անպէտք ու աւելորդ համարել, բայց և այդ հաստատութեան համար շատ աւելի մեծ գումարներ ծախսել, քան այն ժամանակ, երբ այդ հաստատութիւնը դեռ անպէտք ու աւելորդ չէր համարվում:

Ճիշտ ասելով, եթէ ինձ մի քանի տարի առաջ այսպիսի հանելուկներ առաջարկէին, ես նրանց ոչ մի կարևորութիւն չէի տայ և անմիտ բաներ կը համարէի: Բայց մեր բիւրօկրատիայի ցոյց տուած վերջին երկու տարվայ փորձերը միանգամայն ապացուցեցին, որ այդ հանելուկները ոչ միայն անմիտ չեն, այլ և ճիշտ լուծելի են: Ահաւասիկ մի փայլուն փորձնական օրինակ. բիւրօկրատիան մամուլի ազատութիւն յայտարարեց Ռուսաստանում: Յայտնի է, որ մամուլի ազատութիւն եղած տեղերում այլևս բոլորովին աւելորդ է համդիսանում ցենզուրային հաստատութիւնը, որի վրա պետութիւնը մի քանի տասնեակ հազարներ է ծախսում տարեկան: Ռուսաստանում էլ մամուլի ազատութիւն յայտարարվելով, շատ բնական էր, որ պէտք էր հաւատալ, որ թէ մարդիկ այլ ևս չեն հալածվի իրանց արտայայտած մտքի համար և թէ պետութիւնը դրանից բաւականին մեծ դրամական խնայողութիւն կունենայ: Սակայն ճիշտ հակառակը պատահեց. այժմ թէ մամուլի ներկայացուցիչներն են աւելի շատ հալածվում և թէ ցենզուրային գործերի ու պաշտօնեաների վրա շատ աւելի մեծ գումարներ են ծախսվում, քան առաջ:

Ռուսաստանում ոչ թէ ցենզուրան վերացվեց, այլ նա միմիայն կերպարանափոխութեան ենթարկվեց. նախկին «ցենզուրային կոմիտեները» սկսեցին կոչվել «մամուլի գործերին վերաբերեալ կոմիտեներ», իսկ նախկին ցենզորները—«մամուլի գործերին վերաբերեալ կոմիտեների անդամներ» և կամ «մամուլի գործերին վերաբերեալ տեսուչներ»: Եւ այս անուանական կերպարանափոխութեանը ենթարկելուց յետոյ, «սահմանադրական» կառավարութիւնը ցենզուրական հաստատութեան համար սկսեց շատ աւելի մեծ գումարներ ծախսել, քան ծախսում էր մամուլի ազատութիւն չեղած ժամանակներում: Այսպէս, օրինակի համար, 1906 թւականի պետական հաշւեկշռի մէջ ցենզուրական գործերի համար ծախս նշանակված է 321.368 րուբլի, իսկ 1907 թւականի նախահաշւի մէջ նոյն առարկայի համար ծախս հաշված է 412,919 րուբլի, այսինքն՝ 91,874 րուբլով աւելի:

Դուրս է գալիս, որ Ռուսաստանի ժողովրդի վրա ազատ մամուլը շատ աւելի թանգ է նստում, քան նստում էր կաշկանդված մամուլը: Անշուշտ չափազանց թանգ է նստում և անհատի անձեռնմխելիութիւնը, քանի որ ներկայումս թէ բանտերի և թէ նրանց մէջ փակված բնակիչների թիւը քառապատկված ու տասնապատկված է: Նոյնը կարելի է համարձակութեամբ ասել և միւս մեզ «պարգևեալ» բոլոր ազատութիւնների մասին:

Այս բոլոր հակասական ու հանելուկային դրութիւնները տեսնելով, մարդ ակամայից մտածում է, թէ արդեօք բիւրօկրատիան իրան նպատակ չէ՞ դրել զանազան էքսպերիմենտներով ժողովրդին համոզելու, թէ այս ու այն ազատութիւնները շատ աւելի թանգ են նստում նրան, քան նախկին ստրկութիւնը, ուստի և շատ աւելի լաւ է հրաժարվել այդ ազատութիւններից և խնդրել բիւրօկրատիայից նախկին ռէժիմի վերադարձնելու...

Խ.-Ազատ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մայիսի 2-ին

Վերջին օրերումս Գանձակում տիրում է առևտրի անչափ սուստութիւն. այդ բանը վերագրում են բազմաթիւ և բազմատեսակ նոր խանութների աւելանալուն:

Տեղական յայտնի առևտրականներից մէկը, որ մինչ թուրք-հայկական ընդհարումները պարապում էր թուրքերի հետ վաշխառութեամբ և յայտնի է իբրև անխիղճ վաշխառու,—վերջին օրերս սկսել է առևտրով պարապել:

Տեղացի պատուաւոր քաղաքացիներից մէկը նրանից գնում է մի քանի քսակ գարի և բերում կշռում, տեսնում է, որ ամեն քսակին 20—25 ֆունտ պակաս...

Բաւական է, պարոններ, որքան ձեր գրպանի օգտին արտասուեցիք ընդհանուր հայութեան անունը...

Մայիսի 1-ին քաղաքիս բոլոր քրիստոնեայ արհեստաւորները չը բանեցին:

Մի քանի օր առաջ բաղաձորցի Մեսրոպ քահանան քաղաքումս լուրեր էր տարածել, որ բաղաձորցիք իրանց հանդի արօտատեղը, փոխանակ Ալահեար-բէգ Զուլգադարօվին տալու, տուել են հարևան ռուս գիւղացիներին:

Այդ բանից Ալահեար-բէգը զայրանալով, սպառնացել է բաղաձորցիների գլխին նոր արհաւիրք բերելու:

Թէև այս լուրը ոչ մի ազդեցութիւն չարաւ հայերի վրա, քանի որ այդ քահանան ճանաչված է իբրև պրովօկատոր, բայց և այնպէս Ալահեար-բէգ Զուլգադարօվը իր պարտքն էր համարել ներկայանալու փոխանորդ Կորիւն վարդապետին և ասել, որ ինքն այդպիսի բան ասած չէ և զոհ է միայն պրովօկացիայի:

Ինչպէս յայտնի է, ընդհարումների ժամանակ Գանձակում քարուքանդ են եղած Մօլլաջալիլ, Զալլու, Նորշէն և Երևանի թաղերից մօտ 900 տուն, որոնց տան տէրերը անգամ չեն երևում:

Կառավարութիւնը այդ 900 տունը վերաշինելու համար բարեհաճել է նպաստ տալ 6000 րուբլի:

Փոխ-նահանգապետ Կօվալևսկին Գանձակում նշանակելը մեծ բարիք է համարվում և նա Գանձակ մտնելուն պէս պաշտօնանկ արեց Գանձակի գլխին ուղղակի պատուհաս դարձած ոստիկանապետ Չօկլաևովին և իրան հետ բերած մի քանի պաշտօնեաներին: Մեր լեզուն փականքներով կապկապված է եղել ու անձներս վտանգի տակ և իր ժամանակին ոչինչ չենք կարողացել գրել այդ վատահամբաւ ոստիկանապետի վերաբերեալ:

Այժմս նրա տեղը նշանակել են ոստիկանապետ Վօսկրեսենսկուն, որը, ինչպէս երևում է, վերին աստիճանի կարգապահ, եռանդուն մարդ է: Խստիւ հսկում է քաղաքի մաքրապահութեան վրա. առաջարկել է քաղաքային վարչութեանը աւելացնել քաղաքապահների թիւը, հոգալ քաղաքի լուսաւորութեան մասին: Պ. ոստիկանապետը մեզ յիշեցնում է ոստիկանապետ Պօպօվին:

Աւ. Սահակեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Բագու, մայիսի 6-ին

Երէկ հայ դերասանական ընկերութիւնը, ղեկավարութեամբ Յ. Աբելեանի, ներկայացրեց եղբ. Նիկիտինի թատրոն-ցիրկում Շէքսպիրի յայտնի «Օթէլլօն»:

Խաղը անցաւ բաւականին աջող: Պ. Աբելեանը, իբրև Օթէլլօ, իր զգացված և դերի մէջ մտած խաղով մեծ տպաւորութիւն ու բաւականութիւն պատճառեց հասարակութեանը: Պ. Զարիֆեանը իբրև Եագօ վատ չէր: Տ. Արաքսը (Դեզդեմօնա) աւելի հաճելի ու տպաւորիչ կը լինէր, եթէ մի քիչ ձայնի ելևէջների մէջ ուժգնութիւն ունենար: Միւս դերակատարները պահպանում էին անսամբլը:

Դահլիճը համարեա թէ լիքն էր. եկել էին յարգելու պ. Աբելեանի առաջին ներկայացումը:

Ծափահարութիւններ եղան, իսկ վերջում մի քանի անգամ պ. Աբելեանը բեմ կանչվեց տ. Արաքսի և Զարիֆեանի հետ, որոնց արժանացրին բուռն ծափահարութիւնների, և ապա Աբելեանին մատուցվեց թարմ ծաղիկներից մի փունջ:

Ուրախութեամբ պէտք է արձանագրենք, որ դահլիճը լցված էր մեծ մասամբ գործակատար ու բանւոր դասակարգով, որոնք եկած էին խրախուսելու իրանց սիրած դերասաններին:

Բուրժուազիան պակասում էր:

Ասում էին, որ նրանք չը նայելով տոմսակներ վերցրել էին «ազգասիրաբար», բայց ուղարկել էին իրանց տեղ իրանց ծառայողներին ու գործակատարներին, և եթէ դա ուղիղ է, դարձեալ շնորհակալութիւն, բայց... բայց մի՞թէ իրանք ևս չէին կարող ներկայ լինել, մի՞թէ հայերէն և այն էլ եւրոպական յայտնի ու հանճարեղ պիեսաներից մէկի ներկայացմանը, սակայն... էհ, դա հօ ցիրկ չէր...:

Մի վերջին նկատողութիւն, որը և մեր մէջ քրոնիկական է. սկիզբը նշանակել և ուշ սկսել. պէտք է աշխատել ժամանակը չուշացնել և դրա հետ միասին խնդրել և հասարակութեանը չուշանալ և նշանակած ժամանակին գալ, որպէս զի խումբն էլ կարողանայ իր անելիքը իմանալ. ապա մի աչքի ընկնող երևոյթ—միջոցի ժամանակ դուրս գնացած պարոնների մեծագոյն մասը այն ժամանակն է դահլիճ մտնում, երբ արդէն բեմը բաց է, գործողութիւնը սկսված, և անպայման դրանով առաջ է գալիս շփոթութիւն, աղմուկ, ձայներ, որը ի հարկէ խանգարում է լսող հասարակութեանը. հօ չէ կարելի պահանջել դերասաններից ընդհատել, մինչև որ պարոնները կը տեղաւորվեն, և ապա շարունակել. դա վատ բան է և վիրաւորական թէ հանդիսականներին և, որ գլխաւորն է, գեղարուեստի համար: Պէտք է յարգել, սիրել, փայփայել գեղարուեստը ամեն բանով և կարգապահութեամբ:

Յաջորդ ներկայացումը նշանակված է ամսիս 7-ին: Խաղալու են պ. Ա. Ահարոնեանի «Արցունքի հովիտը»:

Ռուբէն Պօղոսեանց

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

Գորիս, ապրիլի 29-ին

Մարդիկ խղճով հանգիստ և երջանիկ չեն կարող լինել, քանի որ չեն կատարում իրանց վրա դրած բարոյական պարտականութիւնները: Պէտք է ենթադրել, որ նրանց կեանքը աւելի դառն կանցնի մանաւանդ այն ժամանակ, երբ հասկանում են իրանց վրա դրած պարտականութիւնները, բայց և այնպէս առանց յարգելի պատճառների, շարունակ մոռացութեան են տալիս նրանց:

Որքան էլ մեր երկիրը թշուառ կացութեան մէջ լինի, որքան էլ հայկական գիւղերը դժբաղդութեան, չքաւորութեան ու քայքայման ենթարկված լինեն, այնուամենայնիւ, եթէ մանրազննին հետաքրքրվելու լինենք, կը տեսնենք, որ նրանցից հեռու կամ մօտիկ քաղաքներում ունեն հարազատներ, որոնք շռայլ ու փարթամ կեանք են վարում ամենաշքեղ պալատներում և երջանիկ են զգում իրանց միմիայն կլուբներում, թղթախաղի սեղանի մօտ բազմած ու очокъ сто рублей! կանչելիս:

Բայց մի՞թէ հայկական խեղճացած կեանքի այս աւելի քան դառն րոպէներում սրանք են նրանց բարոյական պարտականութիւնները, մի՞թէ այդ կերպ պէտք է հանգստութիւն ու երջանկութիւն փնտռել, մի՞թէ կարելի է այդչափ անզգայ գտնվել ներկայ պայմաններում, երբ բոլոր այն գիւղերը և գաւառները, որոնց հորիզոնի տակ մեծացել և սնունդ են ստացել այդ բուրժուաները, գտնվում են սովի ճիրաններում ու խեղդվում արցունքի ծովերում:

Բարեբաղդաբար բոլորը չեն այդպէս, որը մեծ դժբաղդութիւն կը լինէր տնտեսապէս քայքայված հայերի համար. հայկական գիւղերի հորիզոնի տակ սնունդ առած օտարաբնակ ունևորներից շատերը, յիշելով իրանց հայրենի գիւղը, որի հետ կապված են մանկական թանկագին յիշողութիւններով ու ինչ որ ներքին գաղտնի, քաղցր ու մտերմական սիրով, կարելոյն չափ օգտակար հանդիսացան իրանց ծննդավայրերին. նրանք լսեցին գաւառացի հարազատի կոչը, զգացին օգնութեան անհրաժեշտութիւնը և իրանց մասնաւոր խոշոր ու առատ նուիրաբերութիւններով սրբեցին կարօտեալների արցունքը, հաց տուին մաճկալներին, բնութեան զոհերին՝ մշտական հաց մատակարարողներին:

Մենք մեր հերթին չենք մոռացել խորին շնորհակալութիւն յայտնել այն յարգելի անձնաւորութիւններին, որոնք իրանց հայրենասիրութեամբ ուրախացրել և ապրելու յոյս են ներշնչել գիւղացիներին. չենք կարող և իրաւունք էլ չունենք մոռանալ բարերարների այն մեծ գործը, որպիսին է ազատել գիւղացուն սովամահ լինելուց: Թէ որքան մեծ է կարիքը, ընդհակառակը որքան քիչ են նուէրները, թէ որ աստիճան իրճալական են նրանք և վերջապէս որչափ անհրաժեշտ, այդ կարելի է իմանալ միմիայն կարիքի վայրերում, Նպաստ. Ցանձ. մասնաճիւղերի պահեստներում, ուր դիմում են հայ, թուրք, մեծ, փոքր, կին, մարդ, աղքատ և ունևոր:

Մենք անզօր ենք նկարագրելու այն ողբալի տեսարանները, որոնց ներկայ ենք լինում սովեալներին ցորեն բաշխելու ժամանակ. եթէ ասենք կարիքը այնքան մեծ է, որ շատ անգամ գիւղացիների մէջ բանը հասնում է սուր վիճաբանութիւնների, կռիւների, իսկ երբեմն էլ տուր ու դմփոցի, գուցէ այն ժամանակ պակասը լրանայ:

Սակայն որչափ տխուր են յիշեալ տեսարանները, նոյնչափ ուրախ են՝ հարազատանմաններին, մասնաւոր և յատուկ նուիրաբերութիւնների համար, գիւղացիների անկեղծ շնորհակալութեան երևոյթները:

Այսօր ես պատահեցի մի քանի գեղջուկների, որոնք Գորիսից ցորեն էին տանում իրանց գիւղը. հարց ու փորձից ես իմացայ, որ նոյն գիւղացի պ. Գ. Եղիազարեանը բարեհաճել է նուիրել մայրենի գիւղին—750 պուդ ցորեն, ծայրայեղ աղքատներին անդարձ, իսկ միւսներին փոխադարձաբար տալու, գիւղական շտեմարանի անունից:

Ինչպէս ամեն անգամ, նոյնպէս և այս անգամ, մենք խորը կերպով զգացված ենք նման պարոնների ուշադրութիւնից և այսօրինակ նուիրաբերութիւնների ու շտեմարաններ հիմնելու մէջն ենք գտնում սովի դէմ ընդ միշտ կռւելու պիտանի զէնքը:

Թող պ. Եղիազարեանից և նմաններից օրինակ վերցնեն միւս օտարաբնակ հայ ունևորները և իրանց մանկական յիշողութիւններով ու չնչին նուիրաբերութիւններով սերտ կերպով կապվեն իրանց մայրենի գիւղի հետ, այլապէս չարիքի հասցրած ցնցումների համար յաւիտեան պատասխանատու կը մնան իրանց խղճի առաջ, ապա ուրեմն և չեն կարող հանգստութիւն և երջանկութիւն գտնել իրանց ամբողջ կեանքի ընթացքում:

Յ. Գրիգորեան

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌԻՑ

Ինչպէս «Մշակի» պ.պ. ընթերցողները գիտեն, վերջին ժամանակներս գտնվում էի Զանգեզուրի գաւառում, որի մասին խոստացել էի ընթերցողներին աստիճանաբար հաղորդել տպաւորութիւններս:

Զանգեզուրը գտնվում է Շուշու և Ղափանի գաւառների մէջտեղ:

Հայ գիւղերը գլխաւորապէս գետեղված են սարերի ստորոտում ու լեռնաշղթաների լանջերում, որի շնորհիւ էլ շատ գիւղեր ազատ մնացին թուրք խուժանի բազմահազար արշաւանքներին:

Ժողովուրդը, հայ թէ թուրք, աղիեղի արցունքի մէջ է, նոյնիսկ օրեկան պարենի կարօտ: Հազիւ 10%-ը կարողանում է իր միջոցներով կերակրվել, իսկ մնացեալ 90%-ը օրերով սոված, մերկ, ցնցոտիների մէջ փաթթված, զրկված բնութեան ամեն տեսակ բարիքներից միմիայն աղաղակում է. «Աստուած, մի կտոր չոր հաց, որպէս զի ջրի մէջ թաթախեմ ու երեխաներիս տամ...» ահա թէ ինչ են աղերսում պատմական քաջ Ղարաբաղի—Սիւնեաց աշխարհի քաջարի մելիքների թոռները:

Խիստ տխուր տպաւորութեան տակ մնացի, երբ անկարող եղայ շնորհակալութեան մի հիւլէի չափ բառ լսել գիւղացիներից մեր «կուլտուրական միութեան» արած բարիքների մասին:

Հայկական առածը ասում է. «անունը կայ, բայց ամանումը չը կայ»:

Զանգեզուրի գաւառում նպաստները, եթէ նպաստ կարելի է ասել և եթէ արդարութեամբ է բաժանվում, բաժանվում են Բագուի խանի յանձնաժողովի Զանգեզուրի լիազօրների ձեռքով:

Կայ Ղարաղշլաղում (գիւղ է) Ս.-ի մի ամբար, ուր հաւաքում են սովեալների համար ստացված ցորենը: Ինչպէս գիւղացիք են պատմում, ամբարն էլ պատկանում է Դաշնակցութեան և վերջիններս են միմիայն մտածում սովալլուկների մասին...

Այն, ինչ որ մի քանի շաբաթ առաջ «Մշակ»-ում ու «Ժամանակ»-ի երկու համարներում աշխատում էին ապացուցել, թէ դաշնակցական Ս.-ի անունով ամբար չը կայ և այն և միմիայն նպաստը բաժանվում է հայ բարերարների դրամով և ոչ կուսակցական, միանգամայն սուտ է, այն էլ պոչաւոր սուտ:

Ոմն Լորիկ անունով թղթակիցը, որ Գորիս լինելով մի քանի թղթակցութիւններով «Մշակի» մէջ հրապարակ բերեց Դաշնակցութեան տխուր պատկերը նպաստներ բաժանելու առիթով և յայտարարեց, որ Նպաստամատոյց Յանձնաժողովի անունը շահագործում է Դաշնակցութիւնը, միանգամայն ճիշտ է և կան գրաւոր ապացոյցներ:

Ահա գրաւոր փաստերից մի ապացոյց, որը քաղում եմ մի դաշնակցական գրածից Զանգեզուրի ներկայացուցիչ Սամուէլին:

«...Ղարաղշլաղի հաշիւների նկատմամբ ընկերները 31-ին ունեցած ժողովում որոշեցին յարգել քո առաջարկը—306 ր. նուիրել գիւղի «Սամուէլեան» ամբարին»:

Սակայն, ընթերցող, տեսէք ինչ է գրում Բագուի խանի յանձնաժողովի Զանգեզուրի լիազօր պ. Յ. Բէկնազար Իսրայէլեանը «Մշակի» № 60-ում:

«Ինչ վերաբերում է Ղարաղշլաղում «Ս-եան ամբար» հիմնելուն, դաշնակցական չէֆերի ձեռքով ցորեն բաժանելուն, այդ լուրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի զրպարտութիւն, որից պիտի խույս տայ իւրաքանչիւր բարեխիղճ թղթակից»:

Սակայն այդ թողնենք, դարձեալ կը խօսենք ապագայում:

Թուրքերի և հայերի յարաբերութիւնները բաւական լաւ են, երկար ժամանակ է ոչ մի թիւրիմացութիւն չը կայ և գնում—գալիս են իրարու գիւղերը ու կենսական մթերքների առևտուր անում: Թուրքերի թշուառութիւնը աւելի ծով է քան հայերինը:

Գիւղացիք թէև սոված ու մերկ, բայց, դարձեալ ձգտում են իրանց ապրուստը իրանց ճակատի քրտինքով ձեռք բերել:

Եթէ մինչև օգոստոս կարելի լինի սովից ազատել ժողովրդին, այնուհետև ոչ մի վտանգ չէ կարող սպառնալ:

Թ. Մէճլումեան

Գեօզչայ, 1 մայիսի

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ Պ. ԼԷՕԻՆ *)

Յարգելի պաշտօնակից.

«Փայլակի» 19-րդ համարում դարձեալ բարձրացրել էք ձեր «ազդեցիկ ձայնը»: Չը նայելով, որ Ձեր նամակի վերնագիրը իմ անունն է կրում, որ իբր խօսում էք «Ձայնի» և «Մշակի» մէջ տպագրված իմ մի յօդուածի մասին, բայց այնտեղ իմ և էական հարցի մասին շատ քիչ բան էք ասում: Դուք, ընդհակառակը, առիթից օգտվելով, հրապարակ էք թափել այնքան ժամանակ ձեր մէջ ամբարված այն անհագին մաղձը, որ հաւաքված է եղել ճեմարանի վերջին դէպքերի պատճառով:

Ես ասել եմ, թէ՝ «պ. Լէօն ոչ մի գրոշի արժէք չէ տուել տասներկու խմբագիրների դիմումին»: Դուք այդ չէք կարողանում հերքել. չէք կարողանում, որովհետև ապրում են մեր 15 պաշտօնակից-վկաները: Բայց ասում էք, թէ իմ թղթի վերաբերմամբ Մանկ. Ժողովում ձեր ասածներին ես չեմ պատասխանել և ականջի յետև եմ ձգել: «Մեղք չէք անում, յարգելի պաշտօնակից»: Չէ՞ որ Ձեզանից յետոյ, երբ որ ես հերթ խնդրեցի նախագահից Ձեզ պատասխանելու, հ. տեսուչը յարմար չը գտաւ «այդ մասին այդ օրը վիճաբանելու», ասելով որ «մի ուրիշ օր յատկապէս ժողով կանենք այդ թուղթը քննելու»: Ինչպէս ես, այնպէս էլ ժողովի այլ անդամները, դուք էլ մեզ հետ, համաձայնվեցիք: (Թէև մինչև այսօր էլ դեռ պէտք է քննենք): Իսկ ես, որովհետև շատ վստահ և պատասխանատու էի իմ ասածների ճշմարտութեան, կարևոր համարեցի այդ թուղթը ժողովի նեղ շրջանից հանել հրապարակ:

Դուք ինձ, յարգելի պաշտօնակից, մեղադրում էք այն բանում, որ ես ինչպէս ժողովի քարտուղար, «աղաւաղել» եմ ձեր խօսքերը (դիտմամբ ?) և «իբր արձանագրող, միանգամայն անպէտք եմ» եղել և իբր «ամեն անգամ իմ երեսին» ասել են այդ բանը: Թոյլ տուէք, յարգելի կոլլեգա, որ այստեղ դուք զրպարտելու չափ ոգևորվում էք: Ոչ թէ ամեն անգամ, այլ ոչ մի անգամ ես ժողովից կամ նրա նախագահից նկատողութիւն չեմ ստացել, որ ես «ընդունակութիւն ունեմ աղաւաղել» մէկի խօսքերը, կամ «գլխիվայր դնել որոշումները», այլ յիշում եմ, որ «մեր Օհաննէսը» (պ. Յովհաննէս Յովհաննիսեան, որի հետ մտերիմ լինելու պատիւն ունեմ) իր սովորական ընկերական-կատակախառն տոնով մի երկու անգամ նկատել է ինձ, որ ես շատ կրճատ եմ գրում արձանագրութիւնները: Իսկ ես, պ. Լէօ, եթէ կրճատ եմ գրել մանաւանդ վերջին արձանագրութիւնները, դրա համար դուք պէտք է միայն շնորհակալ լինէք: Մի րոպէ ենթադրենք թէ ես, որպէս արձանագրող, իսկապէս «անպէտք» եմ եղել. հիմա էք ասում, ուր էիք ժողովների ժամանակ, ինչո՞ւ չը բարձրացրիք ձեր «ազդեցիկ ձայնը», կամ այդ նկատողութիւնը ամբողջ տարվայ ընթացքում (35 նիստ), ինչո՞ւ չարաւ հ. տեսուչը կամ ինձ միաձայն ընտրող ժողովը: Ես հօ չը խնդրեցի, չաղաչեցի, որ ինձ քարտուղար նշանակեն, այլ ժողովը իր նախագահով հանդերձ ինձ ընտրեց ուսումն. տարվայ սկզբում. (տես արձանագրութիւն 4, որի տակ, պ. Լէօ, փայլում է նաև ձեր ստորագրութիւնը): Կամ դուք, մեծապատիւ պարոն, ինչո՞ւ էիք իմ «խառն, աղաւաղած և գլխիվայր» գրած արձանագրութիւնների տակ անխօս ու լուռ ստորագրում: Վնաս չունի, առաջին տարին էր, որ ես քարտուղարութիւն էի անում, կարող էի խամ լինել, ինչպէս որ դուք էլ կարող էիք խամ լինել որպէս ուսուցիչ և հ. Մեսրոպ որպէս տեսուչ, իսկ ձեր ասելով մինչև իսկ «շատ վատ և անպէտք մանկավարժ»:

Ահա այս է ձեր նամակի ինձ վերաբերեալ կէտը, որ յամենայն դէպս, յարգելի պաշտօնակից, հերքում չէ իմ վերագրած խօսքերի:

Այնուհետև դուք ձեր հաշիւներն էք մաքրում տասներկու խմբագրութիւնների հետ և մանաւորապէս ձեր վաղեմի բարեկամ «Ալէքսանդր Այրապետիչ Քալանթարի» հետ: Նոյնպէս երախտագիտութեամբ չէք մոռանում պաշտպանել բարձր. Մեսրոպ վարդապետին և այլն: Դա, ի հարկէ, ձեր գործն է, Դուք պ. Քալանթարի հետ տասը տարվայ բարեկամներ էք, մի խալաւար աղ ու հաց էք վայելել, ես, ինչպէս գիտէք, ոչ մի հաշիւ չունեմ: Բայց ձեր յօդուածի վերջում ինչ-որ մի մութ ակնարկ կայ, խօսում էք ինչ որ «վարագոյրի» մասին, «ինտրիգի» մասին և դարձեալ, ինչպէս Ձեր սովորութիւնն է, ոչ մի «գրօշի» արժէք չէք տալիս «խղճուկ կանչկառոցների» և աւետում էք աշխարհին, որ այդ վարագոյրի անկիւնն արդէն բացվել է: Հաւատացէք, պ. Լէօ, որ ես էլ ձեզ չափ հետաքրքրված եմ ձեր այդ «վարագոյր»-ով, բայց ես, իմ անձնաւորութիւնը, մի որևէ կապ ունի՞ այդ մութ գործի հետ:

Գ. Լևոնեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 11-ին

«Ժամանակ» լրագրի № 71-ում Թիֆլիսից գրված թղթակցութեան մէջ Ղորխմազ ծածկանուան տակ յօդուածագիրը ցաւ է յայտնում, որ քաղաքիս 1, 2, 3 և 4 քաղաքամասերում ոչ մի հատ ծխական ուսումնարան չը կայ, որը պատսպարէր իր մէջ խեղճ, անճարացած ընտանիքների մանուկներին և ազատէր նրանց փողոցային փչացնող մթնոլորտից ու գրագէտ դարձնէր:

Պ. Ղորխմազ խօսելով այդ մասին՝ մասնաւորապէս մատնանիշ է անում Չրկինեանց եկեղեցու ծխական դպրոցի վրա և յայտնում, որ նախ քան հայոց ծխական դպրոցների փակվելը, այդտեղ գոյութիւն ունէր ուսումնարան, իսկ այժմ ոչ: Այդ բանում յօդուածագիրը յանցաւոր է գտնում ընդհանրապէս այդ քաղաքամասերում գտնվող երկու եկեղեցիների ծխականներին և մասնաւորապէս ուսումնարանների համար ընտրված հոգաբարձուներին և երեցփոխներին, որոնք գործի աջողութեան համար ոչինչ չեն արել, ուստի խորհուրդ է տալիս նրանց հեռանալ ասպարէզից, քանի որ ընդունակ չեն գէթ մի ուսումնարան պահելու և գործը յանձնել նոր հոսանքի թարմ ույժերին, որովհետև նրանք կեանք կը մտցնեն այդ տարտամ և տատանուտ վայրի մէջ և կը ձգտեն դէպի ցանկալին, լաւը և հանրօգուտը:

Քանի որ պ. Ղորխմազի խօսքը վերաբերում է մասնաւորապէս և Չրկինեանց եկեղեցու ուսումնարանի հոգաբարձութեանը, մենք պարտք ենք համարում բացատրելու պ. Ղորխմազին, թէ ինչու չէ բացվել այդ ուսումնարանը և ով է մեղաւոր այդ բանում, հոգաբարձութիւնը, թէ ծխական հասարակութիւնը, որի անդամներից մէկն էլ թերևս ինքը Ղորխմազն է:

Եկեղեցու ծխականներից ընտրվելով հոգաբարձութեան պաշտօնի համար՝ 1906 թ. օգոստոս 3-ին հոգևոր իշխանութեան առաջարկութեամբ Չրկինեանց եկեղեցու միաբան Գրիգորիս քահանայ Երզնկեանցը մեզ ժողովի հրաւիրելով յայտնեց, որ հաստատված ենք հոգաբարձական պաշտօնի մէջ և մանրամասնօրէն բացատրեց մեզ մեր խնամոյ յանձնվելիք ուսումնարանի տխուր և աղքատիկ վիճակը ուսումնարանի փակվելուց առաջ և յետոյ, երբ գտնվում էր նա դիրեկցիայի իրաւասութեան տակ: Նրա բացատրութիւնից երևաց, որ մեզ յանձնվում է եկեղեցու բակում մի կիսաքանդ աւերակ շինութիւն առանց որևիցէ նիւթական միջոցի և դպրոցական կարասիքի, որը դեռևս դիրեկցիայի օրով տարվել է ուրիշ ուսումնարան, որովհետև այդ շինութեան մէջ պարապմունք շարունակելը անվտանգ չէ եղել: Հոգաբարձութիւնս աչքի առաջ ունենալով շինութեան խարխուլ և կիսաքանդ դրութիւնը, որոշեց վերանորոգել նրան, ուստի դիմելով ինժեներ պ. Միքայէլ Յովհաննիսեանին, խնդրեց, որ պարոնը զննելով շինութիւնը ծախսի մի ցուցակ կազմէ: Պարոն Յովհաննիսեանը սիրով ընդունելով հոգաբարձութեանս խնդիրը, կազմեց երկու տեսակ ցուցակ, որոնցից մինը ժամանակաւոր կարկատանների համար 1500 րուբլի գումարի, ուր մտնում է և կարասիքի ծախսը, իսկ միւսը հիմնաւոր վերաշինութեան համար 3000 րուբլի գումարի. բացի այդ ծախսերից առնուազն պէտք էր և մի հազար րուբլի էլ երկու ուսուցչի, ծառայի, վառելափայտի և այլ մանր ծախսերի համար:

Այսպէս ուրեմն, մի կողմ թողնելով հիմնական վերաշինութեան հարցը 1906—7 թւականների ուսումնական տարվայ համար, առնուազն անհրաժեշտ էր ունենալ գէթ 2500 րուբլի ուսումն սկսելու համար: Եկամուտ չը կար և ոչ մի կոպէկ, եթէ չը հաշւենք 230 րուբլի կասկածելի գումարը, որ ուսումնարանը ստանալու էր գոյութիւն ունեցող կիսաքանդ երեք կրպակներից և 300 րուբլու չափ էլ աշակերտական թոշակագումարներից: Եկեղեցին օժանդակել կարող չէր իր չքաւորութեան պատճառով: Վերոյիշեալ բոլոր հանգամանքներն աչքի առաջ ունենալով, հոգաբարձութիւնս որոշեց ծխական ժողով գումարել և գործի հանգամանքները մանրամասնօրէն բացատրելուց յետոյ ծխական տուրք նշանակել: Հոգաբարձութիւնս այդ նպատակի համար ծխականներին երկու անգամ ժողովի հրաւիրեց և երկու անգամն էլ անաջող, որովհետև ժողովականները շատ սակաւաթիւ էին. բայց և այնպէս երկրորդ ժողովը համարվեց օրինաւոր և ծխական տուրք նշանակելու հարցը ընդունվեց համակրանքով. այդ ժողովը երեք անձանց էլ իրանց միջից ընտրեց ծխական տուրք նշանակելու գործում հոգաբարձութեանս աջակցելու համար. նոյն ժողովի մէջ էլ ծխականները որոշեցին 1906-7 ուսումնական տարվայ մէջ ուսումնարանը չը բանալ, այլ պարտք դրին հոգաբարձութեանս վրա այս տարվայ ընթացքում հոգալ ուսումնարանի նիւթականի մասին և աշխատել ձեռք բերել պահանջելիք գումարը շինութեան վերանորոգութեան և կարասիքի համար և պատրաստել ամեն-ինչ 1907-8 թւին բանալու ուսումնարանը: Հոգաբարձութիւնս, բացի ծխական տուրք նշանակելուց, առանձին նամակով դիմել է յարգելի տիկին Եղիսաբէթ Միրզայեանին, որ Չրկինեանց եկեղեցու ծխական է, և խնդրել, որ յանձն առնէ դպրոցական վերաշինութեան ծախսը, բայց մինչ ցարդ նա պատասխան չունի: Հոգաբարձութիւնս ներկայումս ունի առձեռն պատրաստի գումար մօտաւորապէս մի հազար րուբլի և սկսելու է շինութեան վերանորոգութիւնը:

Ահա այս է պ. Ղորխմազի յարուցած հարցի պատմական բացատրութիւնը: Եթէ այս բացատրութիւնից յետոյ էլ պ. Ղորխմազը կը գտնի, որ հոգաբարձութեանս անընդունակութեան շնորհիւ է, որ խեղճ և անճարացած ընտանիքի մանուկները մնացել են փողոցներում և եթէ իր, և կամ այն թարմ և ընդունակ ույժերի մէջ, որոնց վրա նա մատնանիշ է անում, կը գտնի այնպիսի գիրքնական ույժ, որ միայն մոգական գաւազանի շարժմամբ կարող կը լինէին, առանց դրամի, շինութիւն կառուցանել, հոգաբարձութիւնս ամենայն ուրախութեամբ տեղի կը տայ թարմ ույժերին, թող գան ասպարէզ և գործեն ու ստանան այն փառաց դափնիները, որոնց մենք անկարող եղանք ստանալու, մանաւանդ որ այժմ մենք նրանց պատրաստի դրամ էլ կը տանք, թէկուզ մեզ ընտրողները ոչինչ չը տուին:

Բայց հետաքրքիր է գիտենալ թէ ուր էին այդ թարմ ույժերը, որ ընտրութիւնների ժամանակ առաջ չեկան և իրանց պատրաստակամութիւնը չը յայտնեցին հասարակութեանը ծառայելու:

Հոգաբարձութեան ընտրութիւնների համար երեք անգամ ժողովի հրաւիրվեցին ծխականները և երրորդ անգամին միայն հազիւ կարողացան ընտրել մեզ, բարոյական ույժ և գործելու ընդունակութիւն չունեցողներիս

---

* Այս նամակը ես ուղարկել էի «Փայլակին», ուր տպված էր պ. Լէօի յօդուածը. «Փայլակը չը տպագրեց իմ պատասխանը, ուստի տեղ եմ խնդրում «Մշակի» էջերում:

Գրել և մեղադրել մէկին և կամ միւսին շատ հեշտ բան է; բայց գործ կատարելը այնքան էլ հեշտ չէ ինչպէս կարծում է նոր հոսանքին համակրող Ղորխմազը։*)

Հոգաբարձուներ՝ Ա. Ղազաջեան, Մ. Աթաբէգեան, Գ. Շահմուրադեան, Մ. Անանեան։

—

Մեղրի գիւղ, մայիսի 4-ին

Սրա հետ ուղարկելով յարգելի խմբագրութեանդ 22 ր. 55 կոպ., որը հանգանակված է Գ. Իսրայէլեանցի տանը կայացած խնջոյքին հրաւիրվածներից, խնդրում եմ խմբագրութեանդ հայեցողութեամբ յատկացնել սովեալների օգտին։

Արշակ Վաչեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կարմիր Խաչի Ռուսաստանի ընկերութիւնը ուղարկել է Կովկասի Փոխարքային 1549 ր. 86 կոպ. Կովկասում ամբերրութիւնից վնասվածների օգտին։ Այդ գումարից Փոխարքան 1000 րուբլին փոխադրել է Գանձակի Նահանգապետի տրամադրութեան տակ և 715 ր. 61 կ. Երևանի Նահանգապետի տրամադրութեան տակ բաժանելու կարիք ունեցող բնակիչներին։

—

«Закавказье» լրագիրը չը գիտենք որտեղից էր քաղել մի այնպիսի սենսացիոն լուր, թէ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը մայիսի 7-ին մեկնեց Թիֆլիսից, որ տպված էր երէկվայ համարում։ Ամենահաստատ աղբիւրից մենք տեղեկութիւն ունենք, որ Վեհափառը գտնվում է քաղաքումս, մտադիր էլ չէ մօտիկ ապագայում մեկնելու Թիֆլիսից։

—

Երկուշաբթի, ապրիլի 7-ին, Կովկասի Փոխարքայի դիւանատան շէնութեան մէջ (ժողովրդական-զինւորական վարչութիւն), կայացաւ Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու հարցով զբաղվող գլխաւոր կոմիտէի կրթական մասնաժողովի նիստը Վ. Ստրադանովի նախագահութեամբ։ Այս նիստին, բացի մասնաժողովի անդամներից, ներկայ էին նաև գիտութեան զանազան ճիւղերի մասնագէտներ, ընդամենը 27 մարդ։ Նախ և առաջ քննութեան ենթարկվեց Կովկասի համար անհրաժեշտ բարձր կրթական հաստատութեան տիպի հարցը։ Բաւական երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովը, բոլորի ձայներով ընդդէմ մէկի, ցանկալի համարեց խառն տիպը, որպէս աւելի առաձգական և յարմար մեր երկրի տարբեր կարիքներին։ Բարձր կրթական հաստատութեան պաշտօնական անուն տալու հարցը երկար ընդդիմախօսութիւնների առիթ չը տուեց։ Ի միջի այլոց, առաջարկվեցին երեք անուններ. Կովկասեան բարձր դպրոց, պոլիտեխնիկում համալսարանական բաժիններով և կովկասեան համալսարան տեխնիկական բաժանմունքներով։ Ձայնատուութեան ժամանակ մեծամասնութիւնը թեքվեց վերջին անունի օգտին։ Այս հարցերը լուծելուց յետոյ, քննվեց այն կարգը, որով պէտք է բացվէ մեր ապագայ բարձրագոյն դպրոցը, բայց ժամանակի ուշ լինելու պատճառով այդ հարցի վերջնական լուծումը յետաձգվեց երեքշաբթի, մայիսի 8-ին։

—

Ինչպէս Պետերբուրգից հաղորդում են «Закавказье» լրագրին, Նորին կայսերական Մեծութեան տան հօֆմէյստէր իշխ. Գ. Դ. Շերվաշիձէն, որը գտնվում է կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի մօտ, ծանր կերպով հիւանդացել է։ Կատարվել է ծանր օպերացիա, որը աջող է անցել։

—

Առաջիկայ կիրակի օր, մայիսի 13-ին, Թիֆլիսի ժողովարանի ամառային այգում տեղի կունենայ զբօսանք Թիֆլիսի Հայուհեաց Ընկերութեան օգտին։

—

Մայիսի 7-ին Վրաստանի էկզարխ Նիկոնը մեկնել է Կախեթիա։

—

Մայիսի 8-ին, երեկոյեան քաղաքումս տեղաց յորդ անձրև, որը շարունակվեց ամբողջ գիշեր։ Ինչպէս ասում են, անձրևից փլվել են մի քանի հին շինութիւններ. գետնափոր տեղերում ջուրը լցրել է նկուղները, օրինակ Սաղում, ուր ջուրը վնասներ է հասցրել նկուղներում ամբարված ալիւրին։ Հալաբարում մի քանի հին տներ փլվել են։

—

Ի. Ե. Երմօլայեվը Թիֆլիսի գեն.-նահանգապետին խնդիրք է ներկայացրել, որով խնդրել է թոյլ տալ իրան կարդալ դասախօսութիւն սովեալների օգտին։ Գեներալ-նահանգապետը առաջարկել է պ. Երմօլայեվին իրան ներկայացնել դասախօսութեան մանրամասն ծրագիր։

—

Մայիսի 7-ին Մետեխի բանտից ազատվել են տ. տ. Սապոժնիկովան և Շահգելդեանցը, որոնց արդարացրել էր դատաստանական պալատը, բայց մնացել էին բանտում ադմինիստրացիայի կարգադրութեամբ։

—

Թիֆլիսի պօստ-հեռագրատան կառավարիչ պ. Լինդենը մայիսի 5-ի երեկոյեան գնացքով մեկնել է Բագու պօստ-հեռագրատան գրասենեակի կառավարչի օգնական պ. Կուլիկօվի հետ միասին. վերջինը իր վրա կը վերցնի Բագուի գրասենեակի կառավարելը։ Բագուի գրասենեակի վիրաւորված կառավարչի դրութիւնը, ինչպէս հաղորդում են, անորոշ է։ Բժիշկների եզրակացութիւնից պարզվել է, որ գնդակներից մէկը դիպել է թիակի մօտ, անցել է հակառակ կողմը-իսկ միւսը, դիպչելով մէջքին, առայժմս չէ գտնված,

—

Շուշու հռչակված գաւառապետ պ. Գերասիմովին հեռացնելու լուրերը ճշտվեցին։ Կովկասի Փոխարքայի հրամանով Գերասիմովը հեռացված է պաշտօնից և մտցրված է Գանձակի նահանգական վարչութեան կազմի մէջ։

—

Վլադիկավկազի էլեկտրական լուսաւորութեան բելգիական ընկերութեան վարչութիւնը միջնորդութիւն է յարուցել Փոխարքայի առաջ, որով խնդրել է թոյլ տալ բաց թողնել 600 հազար ֆրանկի պարտաթղթեր հանգցնելով այդ պարտքը 27 տարվայ ընթացքում։ Այդ խնդիրքը Փոխարքան ուղարկել է Թերեկի շրջանի կառավարչին հաստատելու համար։ («Зак.»)

—

Քութայիսում հետևեալ շաբաթից կը սկսէ լոյս տեսնել վրացերէն շաբաթաթերթ «Ցիսկարի» (Արշալոյս) անունով։

—

«Черн. В.» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Ապրիլի 27-ին, Սուխումում, ռուսաց առևտրի և նաւագնացութեան ընկերութեան Սուխումի գործակալութեան պահեստում, ծառայողների ուշադրութիւնը գրաւեց մի մեծ շաքարէ տակառ, որ ուղարկված էր Նօվօրօսիյսկից չորս ամսից առաջ, ոմն Ուսուպովի անունով։ Տակառից բխող գարշահոտութիւնն ստիպում է գործակալութեան վարչութեանն ստուգել ապրանքը։ Երևում է, որ տակառում եղել է սոխ, որը արդէն սկսել է հոտել։ Վճռվում է դուրս տանել այդ տակառը քաղաքից և դէն գցել։ Կառապանը տանում է քաղաքից դուրս, և երբ սկսում է սոխը տակառից դուրս նետել, նրա միջից դուրս է գալիս 14—15 տարեկան գիմնազիստի շորեր հագած մի երեխայի պանկեցրած դիակ։ Դիակի վրայ գտնվում են աշակերտական տետրակներ։ Դիակը ուղարկված է քաղաքային հիւանդանոցը և ձեռնարկված է մանրազնին քննութեան»։

—

Վլադիկավկազում, մայիսի 5-ի գիշերը, Թիֆլիսկի փողոցում Պերկի հրապարակում ձերբակալվում է 20 տարեկան մի անյայտ երիտասարդ, որը խոստովանում է, թէ ինքն է սպանել առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Մամայեվին։ Նրա մօտ գտնվել է երկու ատրճանակ։ Ձերբակալելու ժամանակ նա կրակում է, սակայն ոչ ոքի վնաս չէ հասցնում։ Նա հրաժարվել է իր ով լինելը յայտնել և ցաւ է յայտնել, որ, կատարելով իր պարտքը, ի զուր տեղը վիրաւորել է օֆիցէր Բոյչէվկուն և չի սպանել իրան էլ։ («Т.»)

—

Ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, այն լուրը, թէ իբր գեն. Մելլեր Զակոմելսկուն պաշտօն է տրվում Կովկասում, հիմքից զուրկ է։ Գեներալ Մելլեր Զակոմելսկուն «Пар» լրագրի ասելով պաշտօն է տրվում Օդեսսայում գեն. Կաուլբարսի փոխարէն։

—

Ինչպէս հաղորդում են լրագիրները, խղճի ազատութեան Լեհաստանի աւտօնօմիայի մասին օրինագծերը կը մտցնեն Դումայում երկու շաբաթից յետոյ։

—

Պատերազմական հաստատութիւնները մի ուշագրաւ հարց են յարուցել։ Պատերազմի դէպքում Դումայի և Պետական Խորհրդի անդամները զէնքի կանչվում են թէ ոչ։ Զինւորական ծառայութեան մէջ մտադրութիւն կայ մտցնելու մի կէտ, որի հիման վրա Դումայի և Խորհրդի անդամները ազատվում են զինւորական ծառայութեան կանչվելուց («Р. С.»)

—

Կադետական ֆրակցիայի խորհրդակցութեան մէջ որոշված է կենտրոնացնել Դումայի աշխատանքները զուտ գործնական հարցերի վրա և մշակել Դումայի օրէնսդրական գործունէութեան համար մի որոշ ծրագիր Պետական Դումայի քննութեանը ներկայացնելու։ («Р. С.»)

—

Օդեսսայի «ռուս ժողովրդի միութեան» ութսուն և չորս անդամները դիմել են գեներալ-նահանգապետին, Պետական Խորհրդի անդամ Սուխոմլինովին, պատգամաւոր Պուրիշկեվիչին, նոյնպէս և միապետական կուսակցութիւնների նախագահին՝ մերկացումներ անելով Օդեսսայի «միութեան» խորհրդի կատարած զեղծումների մասին, պահանջելով անմիջապէս քննել դրամական բոլոր հաշիւները։ Մերկացումների հեղինակները նկատում են, որ խորհրդի անկոնտրոլ գործողութիւնները, որի ղեկավարն է Կոնովիցինը, դժգոհութիւն և խլրտումներ են առաջացրել անդամների մէջ. նրանք մատնանշում են, որ վերջին կարճ ժամանակների ընթացքում միութեան 20000 անդամների թիւը իջել է 2000-ի, ուստի քննութիւն պահանջելով յոյս ունեն գտնել իսկական յանցաւորներին և պատժել։ («Р. С.»)

—

Ֆինանսների մինիստր Կոկօվցեվը լուրջ կերպով հիւանդացել է։

—

Կառավարչական շրջաններում լուր է պտըտում, որ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը հարսանիքից յետոյ այլևս չէ վերադառնալու իր պաշտօնին. այդ պատճառով նրա փոխարէն Պետերբուրգի զինւորական շրջանի գվարդիայի զօրքերից հրամանատար կը նշանակվի գեներալ Կուրօպատկինը։ («П.»)

—

Ինչպէս հաղորդում են, Պետերբուրգում և Մոսկվայում արտակարգ պահպանութիւնը կէս տարով շարունակելու հարցը վերջնականապէս վճռված է դրական մտքով։ («Парусъ»)

—

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ մեծ քանակութեամբ քաղաքական գործեր են հաւաքված և դեռ շարունակվում են էլի հաւաքվել դատաստանական պալատներում, այս տարի սովորական արձակուրդներ չեն լինելու և նրանց նիստերը շարունակվելու են ամառը ևս։

—

Ոստիկանական դեպարտամենտը, ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ, շտապով կազմել է այն նահանգների, գաւառների և առանձին քաղաքների ցուցակը, որտեղ սաստկացրած պահպանութիւն մինչև այժմ մտցրած չէ եղել։ Այդ ցուցակները կազմելու նպատակը ոստիկանական դեպարտամենտի պաշտօնեաների համար առայժմ գաղտնի է։ («Парусъ»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՐ. ՍԹԷՏ ԵՒ ՀԱՅԵՐԸ

—

(«Ազգ» լրագրէն)

Մր. Ուիլեըմ Սթէտ, Լոնտոնի «Revue of Revnes»-ի աշխարհահռչակ խմբագիրը, իր Պոստոնի այցելութեան միջոցին հիւրասիրուեցաւ Պրն. Մովսէս Ս. Կիւլէզեանի Ջէնըմթ Հիլի բնակարանը։ Ասիկա Պոսթոնի Հայերուն համար անակնկալ պատիւ մըն էր որուն credit-ը կը պարտինք Պրն. Կիւլէզեանի։

Ապրիլ 20-ի կիրակի իրիկունը, Պրն. Կիւլէզեանի կարգադրութեամբ, հաւաքոյթ մը ունեցանք իր տունը ուր ներկայ էին Մր. և Մրս. Սթէտ, Մր. և Միս Պիլքուել և քանի չափ Հայեր և ուրիշ Ամերիկացիներ։

Մր. Սթէտի «The Americanization of the world» գրքէն մէկ քանի կտորներ կարդացուելէ վերջ, հեղինակը սկսաւ խօսիլ մեզ Հայկական խնդրոյն վրայ։

Իր առաջին խօսքը եղաւ. «Ես Անգլիան և Ռուսիան կը ներկայացնեմ զորս Հայերը իրենց ամենաոխերիմ թշնամիները կը նկատեն։ Հայկական խնդրոյն լուծումը, սակայն, կախում ունի այդ երկու տէրութիւններուն համաձայնութենէն։ Արդէն այն բոլոր առկախ խնդիրները, որոնք վէճի ու թշնամութեան պատճառ եղած էին այդ երկու պետութիւններու միջև, կարգադրուած ու կարգադրուելու վրայ են, բացի պզտիկ դժուարութենէ մը Պարսկաստանի մէջ։ Եւ ես համոզուած եմ որ անոնք մօտ ատենէն Հայկական խնդրոյն մասին ալ հասկցողութեան մը պիտի գան»։

Մր. Սթէտ հոս պահ մը խօսեցաւ Ռուսիոյ Ցարին վրայ և խանդավառ կերպով պաշտպանեց զայն Տումային ծայրայեղութիւններուն դէմ ու ներկայացուց իբրև խղճամիտ, վեհանձն, ջերմեռանդօրէն կրօնասէր ու տեսակ մը ճակատագրապաշտ վեհապետ՝ որ վճռած է հին սիսթէմը վերջնականապէս տապալել և Ռուսիան օժտել սահմանադրական կառավարութեամբ։

Դառնալով Հայկական խնդրոյն՝ Մր. Սթէտ, որ տեղեակ կը թուէր ըլլալ ժամանակէ մը ի վեր Հայկական կարգ մը շրջաններու մէջ խնդրոյ նիւթ եղած այն կարծիքին՝ թէ Փոքր Ասիոյ ու Հայաստանի մէջ Գերմանիոյ գերիշխանութիւնը նպաստաւորելով թերևս կարելի ըլլար Հայկական հարցը լուծել, ըսաւ, թէ գործնական բան մը չէր տեսներ ատոր մէջ, և եթէ Գերմանիոյ կայսրը յանձն առնէր այդ ծրագիրն իրագործել՝ ատիկա պատճառ կրնար ըլլալ Եւրոպական մեծ պատերազմի մը։ Բայց աւելցուց, թէ այդ ուղղութեամբ քայլերը կրնան ծառայել միւս պետութիւնները գործունէութեան մղելու։

Յետոյ Հայերուն դառնալով ըսաւ. «Եթէ կուզէք ձեր հայրենակիցները ազատել Թուրքին լուծէն, Ամերիկայի բոլոր Հայերուն կոչ ըրէք և Հայկական դաշնակցութիւն մը կազմեցէք և Եւրոպայի և ուրիշ տեղերու Հայերուն հետ հաղորդակցութեան մտնելով Գործադիր Մարմին մը նշանակեցէք և բուռն գործունէութեան մը սկսեցէք։ Աստուած կօգնէ անոնց որ իրենք իրենց օգնել գիտեն։ Տեսէք Իրլանտացիները,—Անգլիական կառավարութիւնը այնքան չի վախնար Իրլանտայէն՝ որքան Ամերիկայի Իրլանդական Դաշնակցութենէն»։

Ու նորէն ու նորէն շեշտեց. «Աստուած կօգնէ անոնց միայն որ իրենք իրենց օգնել գիտեն»։

Ներկաներէն մէկուն հարցումին վրայ՝ թէ ինքը կրնա՞ր իր թելադրած Հայկական Դաշնակցութեան գործունէութեան եղանակին կամ ուղղութեան մասին խորհուրդ մը տալ, Մր. Սթէտ պատասխանեց, թէ իրեն չէր իյնար այդ մասին գաղափար յայտնել հոս։ Եւ ի պատասխան ուրիշ հայու մը որ ձախորդ գաղափարը ունեցաւ դիտել տալու, թէ այդ տեսակ շարժում մը վտանգաւոր պիտի ըլլար ու պիտի մղէր Սուլթանը 100.000 Հայեր ևս ջարդելու, Մր. Սթէտ նշանակալից շեշտով մը ըսաւ. «Ամեն բանի մէջ վտանգ կայ, բայց եթէ Ամերիկայի և ուրիշ տեղերու ազատ Հայերը բան մը չեն ուզեր ընել իրենց գժբաղդ հայրենակիցներուն համար, ատիկա տարբեր խնդիր»... Բարեբախտաբար ներկաներէն ուրիշ հայու մը կորովի խօսքերը, թէ «բոլոր մեր օտար բարեկամները մեզի համար բան մը չեն կրնար ընել մինչև որ մենք մեր ընելիքը չընենք», նախորդ հայուն թողուցած տխուր տպաւորութիւնը փարատեց։

Միս Պիլքուել, ապա, ակնարկեց թէ այդ տեսակ հզօր դաշնակցութիւն մը կազմակերպելու ամենամեծ դժուարութիւնը հայերուն անմիաբանութիւնն է, թէ անոնք ոևէ խնդրի շուրջ չեն կրնար համաձայնիլ, և թէ իրենց հայրենիքին ազատութեանը համար կազմակերպուած տարբեր կուսակցութիւններն անգամ տաճիկէն աւելի զիրար կատեն...

«Այդ պարագային, ընդմիջեց Մր. Սթէտ, անոնք արժանի են ջարդուելու և պէտք է ջարդուին»...

Միս Պիլքուել թախանձանքով մը պնդեց. «Բայց, Մր. Սթէտ, որովհետև անոնք անմիաբան են՝ պէտք է որ ջարդուի՞ն»։—«Այո, պէտք է որ ջարդուին, եթէ չեն կրնար միաբանիլ», պնդեց Մր. Սթէտ, համոզուած, գրեթէ դաժան շեշտով մը։

Մէկ քանի ուրիշ հարցերէ վերջ, Պրն. Կիւլէզեան շնորհակալ եղաւ ներկայ հայերուն կողմէ, որուն պատասխանելով Մր. Սթէտ ըսաւ. «Ինծի շնորհակալ ըլլալու պատճառ չունիք։ Ես Անգլիացի մըն եմ, և Անգլիան շատ չարիք հասցուցած է ձեզի. այնպէս կը զգամ թէ ծունկերուս վրա գալու և ներողութիւն խնդրելու եմ ձենէ»...։

Ժողովէն վերջ, կը մօտենամ իրեն ու կը հարցնեմ. «Կը հաւատա՞ք, Մր. Սթէտ, թէ Թուրքիոյ մէջ Հայ Յեղափոխական լաւ կազմակերպված շարժում մը նպաստաւոր կրնայ ըլլալ Հայկական խնդրոյ լուծումին»։—«Այո, անտարակոյս, բայց լաւ կազմակերպուած շարժում մը»։

Տօք. Ն. Մ. Գալուստեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոսը այս վերջին տարիներս ներկայացնում է բուռն յուզման նշաններ։ Անգլօ-Թուրք վէճից իվեր, Եգիպտոսի ազգայնական ժամուլն ու գործիչները աւելի ուժեղ գործունէութիւն են ցոյց տալիս. գործունէութիւն, որը նպաստաւոր բնոյթ ունի սուլթանի համար։ Եգիպտոսի ազգայնական խլրտումներից վրդովված անգլիացիները, մանաւանդ անգլիական ջինգօ—շօվինիստ—ժամուլը եգիպտական յուզմունքների մէջ տեսնում է ձգտում՝ վերադառնալու դէպի Թիւրքիան, մտնելու խալիֆի իշխանութեան տակ։

Ահա այս հանգամանքներում, Եգիպտոսի անգլիական ներկայացուցիչի, լորդ Կրօմըրի, հրաժարականը շատ է զբաղեցնում եւրոպական մամուլն ու հասարակական կարծիքը։ Լորդ Կրօմըրը տասնեակ տարիներ վարում էր Եգիպտոսը. այս վերջին օրերս նա իր հրաժարականը ներկայացրեց։ Նախքան հրաժարվելը, լորդ Կրօմըրը Անգլիայի մինիստրութեան ներկայացրեց մի տեղեկագիր, ուր շեշտում է եգիպտական յուզմունքների և նրանց առաջն առնելու անհրաժեշտութեան վրա։ Այդ տեղեկագիրը, իր բացառիկ նշանակութեան համար, տպագրվեց ոչ միայն անգլիերէն, ինչպէս սովորութիւն էր, այլ և եւրոպական մի քանի լեզուներով։ Անգլիական ժամուլը խօսելով այդ տեղեկագրի մասին և մեկնաբանելով նրան, ինչպէս ասացինք, մանաւանդ այդ մամուլի պահպանողական մասը, Եգիպտոսով շահագրգռված միւս պետութիւնների ուշադրութիւնն է հրաւիրում եգիպտական յուզմունքների վրա և խորհուրդ է տալիս, նախքան նրանց վտանգաւոր կերպարանք ստանալը, միահամուռ ջանքերով արմատախիլ անել։

Լորդ Կրօմըրի հրաժարականին առիթ է տուել իբր թէ նրա ծերութիւնն ու հիւանդագին դրութիւնը, ինչ-որ հաղիւ թէ հրաժարման համար համոզեցուցիչ մի փաստ լինի, քանի որ այդ նոյն մարդը, նոյն ծերութեան և հիւանդագին դրութեան մէջ վարել է Եգիպտոսը։ Թէև նրա հրաժարականի իսկական շարժառիթը գաղտնիք է, բայց, նկատի ունենալով՝ մի կողմից՝ նրա անժողովրդականութիւնը, բնիկ եգիպտացի, մահմեդական տարրի մօտ, միւս կողմից՝ Անգլիայի ցանկութիւնը՝ զիջումներ անելու դժգոհ տարրերին և մտնելու քաղաքական մի նոր ուղղութեան մէջ, կարելի է կարծել, որ նա հրաժարվեց Անգլիայի զիջող քաղաքականութեան գործը հեշտացնելու։

Անգլիայի արտաքին գործերի մինիստր սըր Էդուարդ Գրէյ, հետևեալ կերպով ծանուցեց լորդ Կրօմըրի հրաժարականը պալատին։

«Լորդ Կրօմըր, իր բժիշկների խորհրդով որոշեց հրաժարվել իր պաշտօնից, առողջական պատճառներից դրդված։ Այդ առիթով լաւագոյն եմ համարում կարդալ Ժողովիդ այն հեռագիրը, որ ստացել եմ նորին պայծառափայլութիւնից մի քանի օր առաջ։

«Հարկադրված եմ խնդրել Ձեզանից, որ ընդունէք իմ հրաժարականը։ Այդ որոշումը կայացրել եմ բժշկական շատ լուրջ մի խորհրդակցութիւնից, և առանձնապէս շատ ուշադիր մի զննութիւնից յետոյ իմ բժշկի և սըր Ստեֆն Մակկենզի, որ գտնվում է այստեղ։

«Կը ցանկայի մանաւանդ, որ բացարձակապէս իմ առողջական վիճակին վերագրվեն այն պատճառները, որոնց մղեցին ինձ ընդունել այս որոշումը, որովհետև քաղաքական և կամ այլ որևէ կարգի շարժառիթներ միանգամայն օտար են իմ որոշման։

«Կը ցանկանայի նոյնպէս ճանաչել մասնաւորապէս, որ ներկայ կառավարութիւնը բարեհաճել է արդիւնաւոր աջակցութիւն նուիրել ինձ։ Ամենամեծ հաճոյքն ունեցայ ձեր հրամանների ներքոյ ծառայելու և ամենամեծ ցաւը պիտի զգամ տեսնելով մեր պաշտօնական յարաբերութիւնների դադարումը։ Սակայն 49 տարիների ծառայութիւնն ինձ ամբողջապէս սպառել է և ինձ անընդունակ եմ զգում աւելի երկար կրել այն ծանր բեռները, որոնց դնում է ինձ վրա իմ այս պաշտօնը։ Զգում եմ նոյնպէս, որ այլ ևս չունեմ հարկաւոր առողջութիւնն ու ուժը օգտակարապէս հսկելու համար այն ահագին շահերի վրա, որ ներկայումս խնդրի առարկայ են։ Բժիշկները միաձայն հանգիստ պատուիրել են ինձ»։

Այս հեռագրի ընթերցումից յետոյ, Էդ. Գրէյ աւելացրեց.

«Այս լուրը մեզ պատճառեց մեծագոյն վիշտը. նոյնը պէտք է լինի նաև պալատի համար։ Ինչ վերաբերում է ինձ, անձնապէս անհնար է, որ կարողանամ իմ վիշտը բացատրել բառերով։ Մենք միշտ ամենակատարեալ վստահութիւնն ենք ունեցել լորդ Կրօմըրի վրա, ինչպէս նոյն վստահութիւնն ունեցել են մեր Նախորդ, այսքան երկարատև ժամանակամիջոցի ընթացքում բոլոր միմեանց յաջորդող մինիստրութիւնները։ Յետոյ փոխանակված գրագրութիւններից այն յոյսն էինք ունեցել, որ լորդ Կրօմըրի որոշումը վերջնական չէր։ Բայց նկատի ունենալով՝ որ իր բուժումը (որը բարեբաղդութիւնն ունեմ յուսալու) բացարձակապէս կախում ունի իր՝ գործից քաշվելուց, պարտաւորվեցինք ընդունել նրա հրաժարականը»։

Այս պաշտօնական գրագրութիւնը, հակառակ միմեանց շռայլ գովեստներին ու վշտի հաւաստիացումներին, ինչպէս նկատեցինք, ենթադրել է տալիս, որ լորդ Կրօմըրի հրաժարականը միայն ծերութեան և հիւանդութեան արդիւնք չէ։

Լորդ Կրօմըրի յաջորդ է նշանակված սըր Էլդն Գորստ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մայիսի։ Քաղաքային դուման որոշեց յանձնարարել քաղաքագլխին առաջ Նորին Մեծութեան արկանել Դումայի ամենահպատակ զգացմունքները և կենդանի խնդակցութիւն յայտնել Նորին Մեծութեան սպառնացող վտանգից ազատվելու առիթով։

Հոկտեմբերականների երկրորդ նիստում նախագահում է Գուչկովը, որը մատնանշեց, որ Ռուսաստանում նոր կարգ հաստատելու ամենագլխաւոր խոչընդոտ հանդիսանում են յեղափոխական ակտերը։ Համագումարը անցաւ ագրարային հարցի վիճաբանութիւններին։

Երկրորդ կոնֆերենցիայի համար ռուսաց պատգամաւորութեան կազմի մէջ նշանակված են իբրև լիազօրներ Նէլիդով, պրոֆեսոր Մարտէնս, Հաագայում դեսպան Չարիկով իբրև տեխնիկական պատգամաւորներ. Բրիւսելում դեսպան Պրոզոր, զինւորական գործակալներ Լոնդոնում—Երմօլով, Բեռլինում—Միխէլսոն, Լոնդոնում ծովային գործակալ Բեր, պրոֆեսոր գնդապետ Օվչիննիկով։ Նիկոլայեվսկի երկաթուղիների Շիմօն կայարանից ոչ հեռու մի գիւղում, գիւղացի Ուսաչեվը իր հարսանիքն էր կատարում։ Հիւրերը մնացին նրա մօտ գիշերելու։ Գիշերը, երբ բոլորը քնած էին, անյայտ մարդիկ այրեցին տունը։ Կրակի զոհ դարձան նորապսակները, տանտիրոջ եղբայրները և հիւրերից մի քանիսը։ Կողոպտիչները գողացան տան իրեղէնները։

ՏԻՐԱՍՊՈԼ։ Բենդէրում ոստիկանութիւնը գտել է սօցիալ-յեղափոխականների տպարանը։ Ձերբակալված են 4 հոգի։

ՄՈՍԿՎԱ։ Լէֆօրտօվում, զեմստվային բժիշկ Ելիօնսկու բնակարանում ոստիկանութիւնը ձերբակալեց կոնֆերենցիայի ժողոված գիւղացիական դաշնակցութեան 22 անդամներին։ Կոնֆերենցիայում կարդացվելու էր պատգամաւոր Իզմայլովի զեկուցումը։ Երբ երևացել է ոստիկանութիւնը, կոնֆերենցիայի անդամները աշխատել են այրել դօկումենտները, սակայն այդ չէ աջողվել նրանց։

9 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ Բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ 12 զինված մարդիկ յարձակվեցին Պոլիտարովսկի հրապարակում մի խանութի վրա և կասսայից գողացան 700 րուբլի։ Կողոպտիչներից մէկը, որը իրան անուանեց Ռիտ, ձերբակալվեց։ Ցերեկով, 11 զինված անձինք, որոնց թւում և մէկ կին, յարձակվեցին Վասիլևսկի կղզում դրամատար կնեազևի վրա։ Կողոպուտը չաջողվեց։ Չարագործները փախան, միաժամանակ կրակ պարպելով հետապնդող քաղաքապանների վրա, որի ժամանակ ծանր վիրաւորեցին քաղաքապահ Գրիցկևիչին, թեթև—Կրիլցեվին։ Ձերբակալվեց ծանր վիրաւորված մէկ բանւոր։

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 8 մայիսի։ Սէյմի 200 պատգամաւորներից 80-ը սօցիալ-դեմօկրատներ են, ապա հին ֆիններ, նոր ֆիններ, շվէդմաններ, ագրար սօցիալիստներ, գիւղացիական ագրարային միութիւնից։ Կին պատգամաւորների թիւը 19 է. մեծամասնութիւն կազմում են սօցիալ-դեմօկրատները։

ՄԱՄԷՐ, 8 մայիսի։ Ձերբակալված է մի հետևակ լրտես, որը գրաւոր յարաբերութեան մէջ էր օտարազգի մի մեծ պետութեան հետ։ Նա խոստովանեց իր մեղքը և յայտնեց իր հետ յարաբերութիւն պահպանող անձանց անունները։

ԼԻՕՆ, 8 մայիսի։ Հանրապետութեան Նախագահ Ֆալիէրը, գեներալ-խորհրդի սարքած ճաշկերոյթից յետոյ, մեկնեց Պարիզ։

ՍԱՐԱՏՕՎ, 8 մայիս։ Նիկոլաեվում եկեղեցին կողոպտվեց։

ՕԴԵՍԱ, 8 մայիսի։ Քաղաքային դուման սպանված ոստիկանների յիշատակը յարգեց յոտնկայս, որոշեց պսակ դնել սպանվածների դագաղների վրա, պատգամաւորութիւն ընտրել թաղմանը ներկայ լինելու, մասնաժողով կազմել սպանվածների ընտանիքներին նպաստներ տալու և արմատական միջոցներ ձեռք առնել անմեղ արիւն թափելու առաջն առնելու համար։

ԴՎԻՆՍԿ, 8 մայիսի։ Գործարանի բանւոր Գուրէվիչի բնակարանում ոստիկանութիւնը գտաւ սօցիալ-յեղափոխականների տպարանը։ Գրաւված են շատ թռուցիկներ և տառեր։ Ձերբակալված են երկու հոգի։

ՌԻԱԶԱՆ, 8 մայիսի։ Սեմինարիայում անկարգութիւններ են։ Սեմինարիայի շէնութեան մէջ ոստիկանութիւն է մտցրած։ Կօզակները ցրեցին սեմինարիստներին փողոցներում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ Օմսկից, Տուլայից, Մօգիլէվից, Տօմսկից հեռագիրներ են ստացվել, որով յայտնում են, որ Թագաւոր Կայսրի ազատվելու առիթով մաղթանքներ են կատարվել։

ՎՈՐՕՆԷԺ, 8 մայիսի։ Մայիսի 5-ին Կալաչում ձերբակալվել են 30 սօց.-յեղափոխականներ։

Մայիսի 7-ին ձերբակալելու ժամանակ ընդհարում տեղի ունեցաւ ամբոխի և ոստիկանութեան միջև։ Քարով գլխից վիրաւորվեց պրիստաւը և մի քանի գիւղացիներ, սրանցից երկուսը մահացու կերպով։ Հեռագրաթելը կտրված է։ Այսօր եկաւ նահանգապետը կօզակների հետ։

ԲԵՐԴԻՉԷՎ, 8 մայիսի։ Երէկ գիշերը խուզարկութիւններ կատարվեցին։ Ձերբակալված են 10 կողոպտիչներ։

ՎԻԷՆՆԱ, 8 մայիսի։ Երէկ բացվեց միջազգային գիւղատնտեսական ութերորդ կոնգրէսը. նախագահ ընտրվեց ռէյխստագի անդամ իշխան Աուէրշպէրգ։

ԿԼԵՐՄՕՆ-ՖԵՐԱՆ, 8 մայիսի։ Կլէմանսօն Լիօնից մեկնելիս ներկայ եղաւ ճաշկերոյթին, ուր Պիկար, Դիւօ և Դեսէն մինիստրները քաղաքական ճառեր արտասանեցին։ Կլէմանսօն մատնանշեց, որ կառավարութիւնը աշխատում է մտցնել օրէնքները առանց բռնութեան դիմելու և կը ճնշէ միայն անկարգութիւններ առաջացնող ագիտատորներին։ Նա իր ճառը վերջացրեց հետևեալ խօսքերով. «Մենք կամենում ենք, որ հայրենիքի արժանապատւութիւնը և անկախութիւնը պահպանվեն»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բագու		
Արագ	6 ժամ 58 ր.	առաւօտ.
Մարդատար	9 » 3 »	».
Փոստատար	8 » 34	երեկոյեան
Թիֆլիսից դէպի Բաթում		
Փոստատար	1 ժամ 21 ր.	ցերեկվայ
Արագ	11 » 58 »	գիշերվայ
Մարդատար	1 » 3 »	»
Թիֆլիսից դէպի Բօրժօմ		
Մարդատար	9 ժամ 48 ր.	առաւօտ.
»	3 » 8 »	ցերեկվայ
Թիֆլիսից դէպի Երևան		
Մարդ.-ապրանք.	1 ժամ 43 ր.	ցերեկվայ
Փոստատար	1 » 8 »	գիշերվայ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻՆՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. վերաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԴՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Մարգանեցի, պղնձէ, կօբալտի և անտիմօնի հանքատեղեր պահանջվում են արտասահմանեան ֆիրմաների համար։ Նոյնպէս և ուրիշ տեսակ հանքեր և այնպիսի կալուած մեծ անտառներ, որոնք ունեն տեսակ-տեսակ փայտեր, բարեհաճեն դիմել գրաւոր կերպով՝ Тифлисъ, Главный почтатъ, почтовый ящикъ № 41։
(հ. շ. կ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ
Մայիսի 10-ից վերսկսեց ներքին և ջղային հիւանդների ընդունելութիւնը Պետիգօրսկում (հանքային ջրեր)։
Верхный бульваръ № 14 д. кн. Гирей.
(կ. ե. հ.) 3—30

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխաիլ Լեբեդևի
„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 36—40

Ս. Էջմիածնի

Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնը յայտնում է, որ Ա. Ղուկասեանի կտակով մի որդեգիր պիտի ուղարկվի արտասահման ուսանելու «աստուածաբանական կամ հայագիտական առարկաներ»։ Ընտրելին աւարտած պիտի լինի Գէորգեան Ճեմարան և ունենայ հոգևորականի կոչում։

Խնդրատուները թող դիմեն ճեմարանի վարչութեանը մինչև յունիսի 10-ը։

Տեսուչ Ճեմարանի՝ Մեսրոպ վարդապետ

(ե. հ.) 2—2

ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,
որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունատիպ պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։
Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՈՊԷԿ
Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետևեալ գեղարուեստական նկար պրեմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առատութիւն եւ 3) Խաղաղութիւն
Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները։ Պատրաստվում է տպագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրեմիան № 4—ԳԵՐԻՆԵՐ և զատկական պրեմիան մեծադիր գունատիպ, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեան, ընտիր թղթի վրա, շքեղ նկարը—ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Բ.։
ԾԱՆՈԹ.—Գեղարուեստական նկար պրէմիաները առանձին արժեն հատը 50 կոպէկ։ Մեծադիր գունատիպ նկար պրէմիան 3 րուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ iflis, Rédaction du Journal «Haeli»։ Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը։
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպչեան
(եր. հինգշ. և շաբ.) 24—40

---

*) Խմբ.։ Այս թղթակցութիւնը ուղարկված էր «Փայլակի» խմբագրութեանը տպագրութեան, բայց նա մի քանի օր պահելուց յետոյ գտաւ, որ երկար է գրուած և վիրաւորիչ, ուստի առաջարկեց կրճատել ըստ իր հայեցողութեան։

Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «Г Е Р М Е С Ъ» Малатовская № 5. Телефонъ № 852